

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35րդ ՏԱՐԻ

1886 ՄԱՐՏ 8

ԹԻՒ 3812

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 8 ՄԱՐՏ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շար. 3809 Թուէն)

Լրագիրներու համար Հիւսիսային Ամերիկա ամէնէն բարդաւած երկիրն է Անգլիայէն ետեւ . մանաւանդ ստուգիւ գիտենք որ Միացեալ Նահանգներն արդէն գերազանցած են մայր հայրենիքն այդ ասպարէզին մէջ եւ առաջնութիւնն իրենց կողմը շահած : Բազդատուելով ամերիկեան լրագրոց հետ բոլոր ուրիշ երկրի թերթերը , թուով եւ զիրքով շատ խոնարհագոյն կարգի մը մէջ կը մնան :

Առաջին թերթին՝ որ լոյս տեսաւ յ'Ամերիկա՝ անուեն է May Flower , Մայիսի Ժապի . 1675էն սկսեալ կը տպուէր ի Քէմբրիճ (Մասաչուսէց) . երբ գայ 1963 տարին՝ ամերիկեան լրագրութիւնը պիտի տօնէ իւր Գ հարիւրամեան ինչպէս Բն տօնեց 1873ին . իսկ առաջին ամէնօրեայ թերթն 1784ին սկսած է հրատարակուիլ Ֆիլատէլֆիա :

Թուանշանները լաւագոյն ապացոյցներն են եւ իբր այդ կրնան գաղափար մը տալ մամլոյ ազատութեան վրայ : 1773ին միայն 37 լրագիր կար Միացեալ Նահանգաց մէջ ամէնքն ալ շաբաթաթերթ . 1800ին 200 ,

1850ին 5,000 . 1880ին 6,000 էն 8,000 ի հասած էր . այսօր 10 հազարէն աւելի լրագիր կը հրատարակուի հոն եւ անոնց թիւը բնակչաց թուոյն համեմատութեամբ կ'առաւելու :

Եւ կրնա՞յ չզարդանալ լրագրութիւնը երկրի մը մէջ ուր ամէն մարդ գրեթէ առանց բացառութեան կը կարդայ , կը գրէ , ուր ամէն մարդ ընտրող է եւ ուր վերջապէս լրագիրը միակ հանգոյցն է մեկուսացեալ եւ հեռաբնակ գաղթականին եւ իւր ծննդավայրին միջեւ : Հազիւ գիւղ մը կը կազմուի եւ ահա մարդ մը կ'երթայ հոն հետը տանելով քանի մը լիպրա տառեր եւ մի մամուլ : Օր մը տպագրիչ , այդ մարդը հետեւեալ օրը կ'ըլլայ լրագրապետ . ինքը կը գրէ , ինքը կը շարէ եւ ինքը կը տպէ իւր փոքրիկ լրագիրը մէկ երես թղթի վրայ . դիւղացի տղայը կը գնեն եւ կը վաճառեն տաս փարայի , բայց թերթիկը կը մեծնայ գեղին հետ : Հեռաւոր ոսկեհանքերու բնագաւառաց մեջ կը հրատարակուին թերթեր ինչպէս Mebbourne Argus , որուն ծախքն է ամէն օր 7,500 Փրանք կամ տարին 2,525,000 : Մինչեւ իսկ Շօթլանդիայէն եւ Շէոթլանդիայէն՝ որ վայրի ցեղեր են Միացեալ Նահանգաց դրացի՝ իրենց լրագիրներն ունին իրենց բարբառով , կէսն անգլիերէն , կէսն ալ հնդկերէն , գրեթէ ամէնուն ալ շահեկանութիւնը հաստատուած հրատարակութիւններ :

Վիէննայի Արուեստահանդիսին (1873) մի հաւաքածոյ տեսնուած է 119 հատորով , որոց մէջ կ'ամփոփուէին 6,000 հատ ամերիկեան տարբեր լրագիրներ եւ հանդէսներ : Այս հաւաքածոյին կցեալ ցուցակի մը մէջ Մէքսիկայի ծովածոցին եւ Գանատայի

մեծ լճին միջանկեալ երկիրներու լրագրաց թիւը 8,081 նշանակուած էր, յորոց 507 Նիւ-Եօրք կը հրատարակուէին, 194 Պօսթօն, 158 Ֆիլատէլֆիա, 145 Ձիքակօ, 95 Սան Ֆրանչիսկօ և:

Ամերիկեան լրագիրներն անգլիականներէն մեծ են ըսինք: Ուրիշ ազգաց լրագիրներն ուրեմն բաղդատելով անգլո-ամերիկեան հսկայ թերթերուն հետ, գաճաճներ են: Եւ ինչո՞ւ. որովհետեւ ուրիշ տեղ լրագիրը գործիւ մ'է կռուի կամ վիճաբանութեան, մինչդեռ Ամերիկա եւ Անգլիա աղբիւր է նա զեկուցմանց եւ տեղեկութեանց: Ծանուցումները մանաւանդ Ատլանտեանէն անդին անկարծելի ծաւալ մը գտած են: Թէ՛ լրագրութեան մէջ, թէ՛ հանրային սովորութեան մէջ ծանուցումները գլխաւոր տեղ մը գրաւած են: լրագիրներն անոնցմով եւ անոնց համար կ'ապրին գրեթէ. ծանուցումներով կ'սկսին, ծանուցումներով կը վերջանան: Միայն Նիւ-Եօրք տարին 25 միլիոն ֆրանք կը ծախսէ ծանուցմանց համար: Կան գործարանապետներ որոց իւրաքանչիւրն տարին 2-3 միլիոն ֆրանք կը վճարէ լրագիրներու, ծանուցման վարձքի համար: Կիրակնօրեայ լրագիրները մանաւանդ կը վստան ծանուցումներով: Հէլալի կիրակնօրեայ մէկ թերթին մէջ մարդ մը համրած էր 4,437 ծանուցում 105 սիւնով, մէն մի սիւն 300 տող, ըսել է 30,000 տողէն աւելի. եւ որովհետեւ առ նուազն մէկ տօլար կը վճարուի մէկ տող ծանուցման, ըսել է որ այդ օրը 150 հազար ֆրանք միայն ծանուցման վարձք կ'ստանար լրագիրը: Լօնտօնի Թայմզը որ յաճախ 8 էն 12 էջ յաւելուած կը տպէ լոկ ծանուցումներու համար, 60 էն 100 սիւն, տողին 2-3 ֆրանք միայն կ'ըստանայ:

Ամերիկայի լրագիրներն ալ Անգլիոյ լրագրոց նման հատով կը վաճառուին. ժամանակաւ բաժանորդագրութիւնն ընդհանուր կանոն էր, հիմա եղած է բացառութիւն: Ամերիկեան եւ անգլիական մեծ թերթերու մի թուոյ գինն է 30 սանթիմ, թէ եւ կը գտնուին 20 եւ մինչեւ 10 սանթիմնոց ալ մեծ թերթեր: Յրուելու գործը կը կատարեն մասնաւոր գրասենեակներ եւ շրջագայող վաճառողներ: Ամէն փողոցի անկիւն

եւ ամէն հրապարակներու վրայ լրագրավաճառներ կան. մեկնող կամ եկող նաւերուն կ'այցեն այդ մարդիկ. եկեղեցւոյ եւ թատրոններու դռները կը կանգնին. հանրակառաց սանդուխներուն վրայ կը տեսնուին ելեւէջ ընել. եւ ոչ որ կ'արգիլէ անոնց շրջագայիլ կառախումբներու քովերը եւ վախօններու մէջ: Այնքան սովոր է Միացեալ Նահանգաց ժողովուրդն այդ վաճառողներուն որ եթէ քաջուէին հրասպարակէն՝ կենաց պիտոյքներէն մին պակսած պիտի համարուէր: Կը հասկցուի թէ լրագրավաճառներու այս բազմութիւնն եւ անոնց ամէնուրեքութիւնն որ աստիճան կը նպաստէ թերթերուն:

Անգլո-ամերիկեան մամուլն հետաքրքրական կողմը այս չէ միայն. օրինակի համար, Անգլիացիք ունին Graphic պատկերազարդ հանդէսը. 1880ին Գրեյքեան շաբթուն տըպած 400 հազար օրինակի համար 350 հազար ֆրանք ծախք եղած էր. Ամերիկա չուգելով Անգլիայէն վար մնալ՝ իւր Կրֆէն ունեցաւ. բայց որովհետեւ չէր կրնար աւելի գեղեցիկ պատկերազարդ մը ունենալ, մտածեց ուրիշ կերպով գերազանցել զԱնգլիա. ձեռք զարկաւ ամենօրեայ Կրֆէն մը հրատարակելու ութածալ եւ 4 պատկերներով: Այս թերթն ոչ իւր տեսակին մէջ աշխարհիս եղական թերթն է՝ իւր ահագին ծախքն հանելէ ետեւ ձեռնարկուաց շահ կը բերէ:

Երկու երկիրներու լրագրաց անընդհատ զարգացումն եւ ընդարձակումը մի եւ նոյն անգամ կրնայ գաղափար մը տալ թէ՛ հանրային գործոց եւ թէ՛ ժողովրդեան հետաքրքրութեան վրայ: Բաց ի սմանէ, մամուլը աղղեցութեան չափը կուտայ այս շարժումը, նկատելով որ հանրային հետաքրքրութիւնը սկիզբն եւ ախոյեանն է մամուլ, գիտնալու է նաեւ որ լրագիրներն իրենցմէ չէ որ կ'ստանան իրենց ոյժը, այլ տեղեկութիւն, լուր եւ բան իմանալու համար ամէն մարդոց հետաքրքրութենէն, այն տի. եղբերական պէտքէն: Աւ ի՞նչ վարձատրութիւն չեն ընդունիր լրագիրներն փոխան իրենց ահագին ծախսերուն: Մէկ օրինակ Թայմզի, մէկ օրինակ Հէլալի ծանուցումներու հաշիւը կրնայ գաղափար մը տալ այդ լրագրոց տարեկան եկամտին վրայ, 15 էն

մինչեւ 30-40 միլիոն ֆրանք, եթէ նոյն համեմատութիւններն պահուին կամ եթէ այդ լրագիրներուն եկամուտի վարժական քանակն նոյնն ըլլար բոլոր տարուան ամէն օրերն ալ: Հէրալտ եւ Թայմզ գրեթէ նկուղներու մէջ ծնած եւ այսօր պալատներու մէջ բազմած՝ կրնայ երեւակայութիւն ուրեմն թէ ի՞նչ եկամուտներ կը բերեն իրենց տէրանց որպէս զի կարենան սոքա հանրագում հաստատութիւններ հիմնել, դիտարաններ կանգնել եւ գիտական խուզարկութիւններ ընել տալ բոլոր ծախքերն իրենք հոգալով: Եւ իբրեւ թէ բան մը պակասեր իրենց, այդ ահագին եկամուտները կը գործածեն Թայմզի եւ Հէրալտի հրատարակիչը, իրենց լրագիրներն աւելի կատարելագործելու եւ լաւացնելու անդադար: Թէ՛ մին եւ թէ՛ միւսը կ'ուզեն պահել այն համբաւը, այն հռչակը զոր ստացած են իբրեւ կանխադեկոյց հրատարակիչը աշխարհիս: ուր որ ալ թղթակից մը ունենան, անսահման վարկ մը բացած են անոր որպէս զի պէտք եղածին չափ. ծախսէ. լուր մը որքան ալ սուղի նստի, արժան է իրենց համար:

Հէնրի Սթանլի իւր Ինչպէս գտի գլխիկըսելն գրքին մէջ իւր ուղեւորութիւնն յԱֆրիկէ մանրամասնօրէն պատմած. պահուն կ'ըսէ թէ Նե-Երթ Հէրալտ լրագրին իբրեւ թղթակից երբ Մատրիտ կը գտնուէր, 1869 հոկտ. 16 ին Փարիզէն հեռագիր մը ստացաւ, պատէս գրուած. « Փարիզ եկէք, կարեւոր գործ մը կայ, Ճէյմս Կորտօն Պէնէթ », Նե-Երթ Հէրալտի տիրոջ որդին: 48 ժամ վերջը Սթանլի Կրանտ Օթէլ կը մտնէր եւ Պէնէթի գումը կը բաղմէր: Ներսէն « Մտէք » ըսաւ ձայն մը: Մտայ, կ'ըսէ Սթանլի, դեռ անկողինն էր:

— Ո՞վ էք, հարցուց:

— Սթանլի:

— Ա՛հ, այո, նստէք, կարեւոր պաշտօն մը ունիմ ձեզ յանձնելու:

Եւ գիշերազգեստը ուսին վրայ նեւելով հարցուց.

— Ո՞ւր կարծէք որ գտնուի այժմ Լիվինկոթըն:

— Ձեմ գիտեր, պարոն:

— Կը կարծէք թէ մեռած ըլլայ:

— Գուցէ մեռած ըլլայ, գուցէ կենդանի:

— Ես կարծեմ որ ողջ է, և կրնայ գտնուիլ. կը խրկեմ զձեզ իւր ետեւէն:

— Ի՞նչ, կ'ուզէք որ Լիվինկոթընի ետեւէն Աֆրիկէի խորքը երթամ:

— Այո՛, եւ կ'ուզեմ որ գտնէք զինքը, լուրեր բերէք իրմէ. ո՞ր գիտէ, գուցէ ծերունի ուղեւորն կարօտ մի՛ճակի մէջ ըլլայ. սուէք ձեր հետ ինչ բան որ իրեն օգտակար կարծէք. անշուշտ ձեր առանձին խորհուրդներուն համաձայն պիտի գործէք: Ինչ կ'ընէք ըրէք, Լիվինկոթընը գտէք:

Նախ ապւեցայ այս տարօրինակ առաջարկէն. երթա՛լ ո՛ր գիտէ ուր, մեռած կարծուող մարդ մը փնտռել:

— Մտածեցի՞ք արդեօք, պարոն, ըսի իրեն, թէ որքա՛ն ծախուց կարօտ է այդպիսի ճանապարհորդութիւն մը:

— Ո՞րքան ծախքի կարօտ է, հարցուց:

— Պիւրթօն եւ Սբէք Յ հազարէն մինչեւ 5 հազար ոսկի ծախսեցին. կը վախեմ որ 2500 էն պակաս չպիտի ըլլայ ինձ պէտք եղածը:

— Լաւ. առ այժմ հազար ոսկի առէք. երբ որ հատնին հազար ոսկիի փոխանակագիր մը խրկեցէք. յետոյ ուրիշ հազար եւ այսպէս յաջորդաբար. բայց Լիվինկոթընը գտէք:

Սթանլի լուռ մնաց. կարծէք թէ արեւելցի ծառայի մը նման « լսել՝ հնազանդիլ է » կ'ըսէր իւր պետին. ուստի առանց պաշտակը քակելու ամերիկեան լրագրին թղթակիցը ճանրայ ինկաւ, եւ ինչ որ անգլիական կառավարութիւնը չէր կրցած ընել, լրագրասպետի մը ծախքով կատարեց. եւ ինչ որ որդիական սէրը չէր զօրած յանձն առնել տալ Լիվինկոթընի որդւոյն Օսվալտի՝ Սթանլի կը կատարէր անձամբ. զի մինչդեռ անգլիացի ուղեւորները Զանդիպարի մէջ չէին գիտեր ինչ ընեն, կը վարանէին, Սթանլի կը դառնար Լիվինկոթընի քովէն՝ հետը բերելով բազմաթիւ նամակներ եւ տեղեկութիւններ: Եւ ի՞նչ խոչընդոտներ, դժուարութիւններ չէր յաղթած եւ ի՞նչ վտանգներ չէր անցուցած. ուստի եւ ոչ ոք հաւատաց իրեն երբ պատմեց իւր ուղեւորութեան պարագաներն եւ արդիւնքը. շինծու եւ խա-

բէական բաներ կարծուեցան բերած նա-
մակները զորս Պէնէթ հեռագրեց Եւրոպա-
յէն յԱմերիկա 50 հազար Փրանք ծախուե-
լով: Լօնտօնի Աշխարհագրական ընկերու-
թիւնը խաբեբայ հրատարակեց Սթանլին .
այլ վերջ ի վերջոյ թերահաւատք զգացին
իրենց սխալմունքն եւ ճանչցան ճշմարտու-
թիւնը: Միայն թէ երբ տեսան որ տարա-
կոյսը ներելի չէ, քննադատներն սկսան ը-
սել թէ Նիւ-Եորք Հէրալտի համար դրուատ
մը, յանձնարարական մը պէտք էր, այն ալ
դատուեցաւ »:

Արդ ի՞նչ էր, ի՞նչ է այդ ամերիկեան
թերթն որ ահագին գումարներ եւ եղական
մարդիկ ունի իւր տրամադրութեան ներ-
քեւ՝ անհնար երեւցող գործերուն իսկ ձեռ-
նարկելու համար: Նիւ-Եորք Հէրալտ ո՞ր-
պիսի միջավայրի մէջ ծնաւ ու մեծցաւ:
Ո՞րքան հետաքրքրական է պատմութենէն
ուսնիլ պետութեանց զարգացման պատ-
ճառներն, նոյնքան հետաքրքրական կը թուի
գիտնալ թէ ինչպէս զարգացաւ ու ճոխա-
ցաւ Ամերիկայի ամենակարեւոր թերթն,
որովհետեւ ինչպէս թայֆը յ'Անգլիա, նոյն-
պէս Նիւ-Եորք Հէրալտ պետութիւն մ'է
Միացեալ Նահանգաց մէջ:

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ
(Շարունակէ)

ԳԱՒԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ

ԱՐԴԻ ԿԱՅՈՒԹԻՒՆ

ԵՈՋՂԱՏՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՅ

Անցաւ տարի մ'ալ եւ դնաց միանալ
միւս տարիներու թուոյն որ Նոզդատու ազ-
գայնոց համար անօգուտ եւ ապարդիւն
հանգիստացած են: Մասին ընթերցողները
կը զրկենք Շաբաթաթերթիս 3773-74 թը-
ւոց որպէս զի հաճին մի անգամ ակնարկ մի
նետել 1884ի ազգային վիճակին տեղեկա-
դրութեան: Այժմ եւս նոյն կարգին հե-
տեւելով արագութեամբ եւ հաւատարմու-
թեամբ կը գրենք հետեւեալ տեսութիւնը:

Ա.— ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ՝ որ եր-
կու տարիէ ի վեր անկախ կը մնայ եւ կա-

նոնաւոր վարչութիւն մը ունենալու համար
անհրաժեշտ է օր առաջ դոհացուցիչ լուծ-
ման մը յանգիլը, տարւոյս միջոցին զարթ-
եաւ անգոր կերպով, երբ Ղ. Շիմանեան
եպիսկոպոսի մի քանի գրութիւններն հա-
սան իւր կողմնակցաց որք կը թելադրէին
նոր ի նորոյ զինքը Պատրիարքարանի միջո-
ցաւ առաջնորդութեան կոչել, բայց արձա-
դանդ չգտան: Սակայն մեծ պէտք կայ ար-
թուն եւ հսկող առաջնորդի մը ներկայու-
թեան Նոզդատու ընդարձակ վիճակին մէջ,
որոյ թեմական խեղճ գիւղացիք միշտ հո-
գեւոր սով եւ երաշտութիւն կը կրեն:
Այսօր այդ թեմին 49 դիւղերն եւ գիւղա-
քաղաքներն կը տառապին այլ եւ այլ երկ-
պառակութեանց պատճառաւ որոց մեծա-
գոյն մասն ամուսնական խաղիւրներ են զորս
խոհուն առաջնորդ մը շատ դիւրաւ կրնայ
խաղաղել: Յօդուածիս չարունակութեան
պիտի կցենք մի քանի իրողութիւններ:

Բ.— ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ իւր անգոր-
ծութեամբ միայնեցաւ. — Կրօնական ունե-
նալով բոլոր բահանայներն իրեն անդամ, այլ
ամբողջ տարւոյ ընթացքին կանոնաւոր նիստ
մը չըրաւ: Այս երանելիներէն ոչ որ գիտէ
ժողովոյն սրբազան կոչումը: Սուրհուրույի
ամուսնաթողութեան գայթակղալից անցքը
զոր Արեւիկ ժամանակին ծանոց իւր գլուխ
գործոցն եւ միանգամայն փորձաքարն ե-
ղաւ՝ եւ իբրեւ թէ վերջացաւ ի մեծ նա-
խատինս ազգայնութեան: Պէտք եղած ա-
տեն իբրեւ առաջնորդական փոխանորդ կը
ներկայանայ Դուռը ժողովոյ նախագահ Տէր
Յ. հայրը, որոյ համար կը վճարէ ազգը 100
դահեկան:

Գ.— ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԻՒԼԱՆԻ Կապու-
թիւն չէ մտած. 15 անդամոց Յին
բացակայութեամբ 12 անձամբ ազնուապե-
տական ժողով մ'եղաւ. թէեւ միջին հաշ-
ւով չաբաթ մի անգամ կը գումարուի,
բայց հետաքրքրութեան համար դիտած եմք
որ հինգ, վեց հոգիէն աւելի ներկայ չեն
գտնուի. եթէ այս թիւն անցած է, ար-
տասովոր դէպք մը տեղի պիտի ունենայ ը-
սել է: Իր կազմակերպութիւնն ժողովըր-
դեան կամօք չէ. ուղածնին կ'առնեն, ու-
ղածնին կը հրաժարեցնեն: Ար տեսնես որ
անդամոց մէկը ամիսներով բացակայ կը
գտնուի, մէյմ'ալ յանկարծ կուգայ: Գի-

տե՞ս, սիրելի ընթերցող, ինչո՞ւ համար եթէ անձնական գործ մը ունի, կամ իւր ազգականներէն մէկը գործ ունի կամ յանձնարարական ունի, զանոնք կարգադրելու համար կուգայ. կամ մէկու մը դէմ ոխ ունի, անոր հակառակ գործելու, պոռալու եւ կանչելու կուգայ: Գրեթէ ամէն անգամ անձնական գործոց համար կը յաճախէ: Հանրական կամ ազգային գործոց լուծման համար, փնտռէ որ ժողովին մէջ մարդ գտնես: Քանի մը օրինակներ. Կ. Պոլսէն Ընդհ. ժողովոյ համար երկու տարիէ ի վեր երեսփոխան կ'ուզուի եւ դեռ պիտի ընտրուի. հոգեւոյ Ներսէս Վարժապետեանի վրայ չիրիմ մը կանգնելու եւ Նորին անուամբ բացուելիք վարժարանին հանգանակութեան մասնակցելու համար, Յանձնաժողովին նամակին եւ յանձնարարականին հետ նաեւ Սրբազան Պատրիարք Հօր կոնդակն թէեւ երկիցս ժողովին ներկայացուած, բայց ընդունելութեան և մասնակցութեան արժան դատուած չէ: Մարդահամարի համար Պատրիարքարանէն չըրջաբերականով մը հայերէն եւ տաճկերէն կանոնադիրներ եկած են, որպէս զի վիճակին մէջ ցրուի եւ ազգայինք մահուան, ծընընդեան եւ ամուսնութեան առեւ ընդայնմ վարուին, նոյնպէս երեսի վրայ ձըգուած է: Այսպէս այն ազգայնոց, որք ժողովականաց հետ ո եւ է յարաբերութիւն չունին, անձնական եւ ամուսնական խընդիրներն երեսի վրայ կը մնան. եւ այս զարմանալի չէ, որովհետեւ ժողովոյ մէջ ոչ կարգ կայ ոչ կանոն կայ, իւրաքանչիւրն իր ուզածին պէս կը տնօրինէ:

Դ.— ՏՆՏԵՍԱԿԱՆ խորհուրդը միայն մէկ անձի վրայ կը կայանայ, որ ազգին եկամուտներն կ'առնէ եւ ըստ ըմաց կը տընօրինէ, եւ այս ալ Ղեւոնդ եպիսկոպոսի տնօրինութիւնն էր: Երեք տարիէն աւելի է որ կը վարէ այս պաշտօնն եւ մինչեւ ցարդ ազգին հաշիւ մը ներկայացուցած չէ, եւ բնաւ ալ չկրնար ներկայացնել: Նատ դըպրոցականք դեռ երկու տարուան պահանջ ունին, բայց մեր Քիպրիթեանը չհաճիր վճարել:

Ե.— ԿՐԹԱԿԱՆ վիճակը գոնէ գոհացուցիչ էր. Հոգաբարձութիւնն՝ որոյ անդամներն են Ն. Սահակեան, Պ. Յակոբեան,

Գր. Քիւրքճեան, Ստ. Գաբլանեան եւ Կ. Բաբասեան, գովելի գործունէութիւն մի ունեցաւ: Արդէն Մաթի նոյն թուոյն մէջ լիովին տեղեկացուցած եմք իրենց պաշտօնին էութեան մասին. բայց բաւական ընդդիմութիւն կրեցին Տնտեսականէն, որոյ գործին չէր գար եկամտից մէկ մասին սոյն նպատակաւ գործածուիլը: Իւր իրաւասութեան ներքեւ գտնուող վարժարանաց պաշտօնեայք իրենց ամսականներն լիովին առած են եւ դժգոհութեան բնաւ տեղի տրուած չէ: Ուշադրութեան արժանի է որ Ղեւոնդ եպիսկոպոս չէր կրցած իւր անսահման վարկով ասոր կիսուն չափ բարեկարգել, թէեւ կրկինը ծախսեց:

Զ.— Գանը վարժարանաց վիճակին:

Մայր վարժարան մանչերու՝ որ կը բաղկանայ Ուսումնարանէ, Նախակրթարանէ եւ Ծաղկոցէ, ունի եօթը դասատուներ, որոց ամսականներն են՝ 350, 300, 200, 120, 100, 70, 40 = 1,180 բոլորը. տնտեսներու եւ այլ ծախուց համար ալ 300 դահեկան: Կը դասախօսուին բաց ի հասարակ ուսմունքներէ ալճեպրա, տոմարակալութիւն, գրագիտութիւն, երկրաչափութիւն և բընապատմութիւն: Ուսումնարանն ունի 46 աշակերտ, Նախակրթարանը 70 եւ 116 Ծաղկոցն եւ Ընտելարանը: 100 թոշակաւոր աշակերտ կայ եւ 150 ձրիավարժ. թոշակներու աստիճանն է 75, 50, 30: Սոյն վարժարան բարձրակարգ վիճակ մը ունի, եւ կրնայ աւելի բարձր վիճակ մը ստանալ չընորհիւ պատ. Հոգաբարձուաց:

Վահանեան վարժարան մասնաւոր, մանչերու, կ'աւանդուին հայերէն, տաճկերէն, գաղղիերէն ևն. թիւ աշակերտաց 61. տարեկան ծախքը ընդ ամենն 8-9,000 դահեկան է. թիւ դասատուաց երկու. թէեւ չունի իւր առջի նախանձաւոր եւ փառաւոր վիճակը, բայց նորէն դոհացուցիչ է:

Խորհեան վարժարան ծխական. ծաղկոց մը, կամ բուն նշանակութեամբ խամրոց մ'է. 105 աշակերտ ունի. տարեկան ծախքն է 4,400 դահեկան. ունի երկու դասատուներ. անկերպարան վիճակ մը ունի. ոչ ապագայ ունի ոչ ներկայ:

Տէրացեան մասնաւոր վարժարան ընդ տնօրինութեամբ Յ. Միաբանեանի՝ Ղեւոնդ

Սրբազանի փոքրաւորին . աշակերտաց թու-
շակներէն կը կառավարուի . գլխաւոր դա-
սատուն կ'առնէ՝ 550 դհ . թիւ աշակերտաց
80 . գոհացուցիչ վիճակ մ'ունի եւ յուսալի
է որ յառաջանայ :

Համադրային վարժարանը անկերպարան
վիճակ մ'ունին . մանչերու ճիւղն ունի 40
աշակերտ . տարեկան ծախքը 2,500 դահ .
Օրիորդաց ճիւղն ունի 50 աշակերտ . տարե-
կան ծախք 18 ոսկի :

Օրէորդաց վարժարանն ազատած է իւր
նախկին խեղճ վիճակէն շնորհիւ պատ . Հո-
գաբարձութեան . Այսօր կը վայելէ այդ
դպրոցը Տիկին Նազգաշեանի հոգածու-
թիւնն : Վարժարանին կառավարութիւնն
եւ դատաւանդութիւնն չափ գոհացուցիչ է ,
եւ տեղացիք իրաւամբ կը յուսան մեզ հետ
վայելել նորա արդիւնքը . թիւ աշակերտաց
160 :

Է.— ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ ՀԱՂԻՆ մենք չենք
կրնար տալ , որովհետեւ այլ եւ այլ պատ-
ճառներով ընկերութեանց ստակին պահա-
պաններն իրենց հաղիւն չեն ներկայացու-
ցած . կը յուսանք թէ մօտերս կրնանք տե-
ղեկանալ սոցա գործոց և աւանդել ընթեր-
ցողաց :

Ը.— ՀԱՇԻԻՆԵՐՈՒ ԽՆԴԻՐՆ Եւս թէ եւ
չափ աղմուկ հանեց , բայց լուծման չյան-
գեցաւ . ի մէջ այլոց կրնանք յիշել հանրա-
ծանօթ « Տնտեսական »-ը , որ քիչ խօսքե-
րու տեղի չտուաւ : Ասոնցմէ հետեւեալ-
ներն իրենց ներկայացուցած պատկառելի
գումարներով ուղադրութեան արժանի են ,
զորս չգիտենք որ կեդր . վարչութեան որ
ճիւղին յանձնենք :

10,000 Գաղատիոյ սովելոց հանգանակու-
թենէն Ասլանեան Րէսմիի վրայ
մնացած է եւ թէ՛ տեղւոյս եւ
թէ՛ Գաղատիոյ դատարաններէն
վճռուած է :

50,000 Գոնսուլիտէի հաշուէն այլ եւ այլ-
ներու մանաւանդ վերոյիշեալին
վրայ .

12,000 Տօնիկեան հաճի Սերգիսին վրայ 45
հազարէն մնացած .

12,000 Ասլանեան Եղիայի վրայ դպրոցի
չինութեան հաշուէն .

5,000 Լուսաստիւն ընկերութեան դրա-

մագլուխը Գպրալեանի, Եսայեանի,
Բագլաեանի վրայ .

5,000 Եսայեան հաճի Մատթէոսի վրայ .
51,555 Սեթեան ընկերութեան մեծաւ մա-
սամբ անկախ հաշուէն որ Պ. Մն.
Սէմէրճեանի վրայ է .

10,000 Լիւսազօր տնտեսական Գիպրիթ ճեա-
նի վրայ .

151,555 Կտակեալ հաշիւ 1885էն 1886ի . . .

ՎՏԱՐԱՆԴԻՆ

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԻ ՏԱՐԻ ՇՎԷՅՏԱՐԻԱՅՈՒՄ

(ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)

(Շար . նախորդ թուէն եւ վերջ)

Նթէ շվէյցարական մանկավարժութիւնը
հասկացել է , որ մանուկներին եւ պատա-
նիներին առողջ եւ խելացի կերպով դաս-
տիարակելու համար հարկաւոր է մի կողմից
ենթարկել նրանց բարոյական խիստ դիս-
ցիպլինային , բայց ուրիշ կողմից ամենափոքր
հասակից արդէն հարկաւոր է յարգել նը-
րանց մէջ նրանց անհատական զգացմունքը ,
— ո՞րքան աւելի հասկացել է շվէյցարական
հասարակութիւնը , թէ վտանգաւոր է ճըն-
չել , ստորացնել այդ անհատական զգաց-
մունքը նոր սերունդի մէջ՝ նրա երիտասարդա-
կան հասակում : Եւ այդ շատ լաւ են հաս-
կացել Շվէյցարիայում թէ՛ պետութիւնը ,
թէ՛ հասարակութիւնը . եւ թէ բարձրագոյն
դպրոցների վարիչները : Այդ կողմից շվէյ-
ցարական բարձրագոյն դպրոցներում տիրող
ոգին , շվէյցարական համալսարանների եւ
բազմաբուհատեան դպրոցի թէ՛ ուղղութիւ-
նը եւ թէ ներքին կազմակերպութիւնը չեն
տարբերվում գերմանական համալսարան-
ներում տիրող ոգուց , նրանց ուղղութիւ-
նից եւ ներքին կազմակերպութիւնից :

Բնութեան դէմ ոչինչ չէ կարելի անել .
Յայտնի է , որ մարդը երիտասարդ ժամա-
նակ չուտ գրգռվող , չուտ եւ ամեն բանով
յարժտակվող է , ամեն բան չուտ վճռող է ,

միեւնոյն ժամանակ չափից դուրս ինքնասէր եւ ինքնահաւան է, փոքր բանից մեծ բան չինող, փոքր դէպքին մեծ նշանակութիւն տուող, ամեն դէպքում աղմուկ հանող, անգուսպ է, անսահման ազատութիւն սիրող է: Երիտասարդ հասակում մարդու մէջ դեռ եւս-եռ են գալիս նրա բոլոր զգացմունքները, նրա մէջ դեռ կատարելապէս չեն կարգաւորվել մտքերն ու զգացմունքները, չեն ստացել դեռ եւս հասակ առած մարդու հասունութեան կերպարանքը, նրա մէջ դեռ եւս անգործագրելի են մնում բնութիւնից նրան տուած աւելորդ ուժերն ու աւելորդ եռանդը: Տուեցէք երիտասարդին, ուսում առնող երիտասարդին, կատարեալ ազատութիւն, — եւ նա կատարելապէս գոհ կը լինի՝ աղմկալի կեանք վարելով, ընկերութիւններ, ժողովներ կազմելով, դասերից ազատ ժամանակ դրօշմելով, երգելով, ճառախօսելով, վիճաբանելով, նոյն իսկ ամեն տեսակ անմեղ չարութիւններ անելով: Երիտասարդ հասակին բնականապէս յատուկ է ծայրայեղութիւնը: Խլեցէք նրանից իրան համար կատարեալ բաւականութիւն պատճառող ազատութիւնը՝ փայլելու, սղմուկ անելու, այլ եւ այլ ընկերութիւններ կազմելու, քեֆեր անելու, նոյն իսկ անմեղ չարութիւններ անելու, — եւ նա անպատճառ կ'ընկնի մի այլ ծայրայեղութեան մէջ. նա կ'ամ անբարոյականութեան մէջ կ'ընկնի, կ'ամ կը սկսի քաղաքական գործերով զբաղվել: Իսկ այդ երկու ծայրայեղութիւններն էլ վտանգաւոր են:

Այդ ճանարտութիւնը շատ լաւ են հասկացել Շվեյցարիայում թէ՛ պետութիւնը, թէ՛ համալսարանական վարչութիւնները եւ թէ՛ նոյն իսկ հասարակութիւնը, եւ ամեն մարդ ներողամիտ աչքով նայում է, ժպիտը երեսին ամեն բան տանում է, ամեն բան համբերում է ուսանող երիտասարդութիւնից:

Եթէ քաղաքի ամենալաւ փողոցով անցնելիս ցերեկ ժամանակ հանդիպէք մի աղմկալի խումբ երիտասարդների, որոնք բարձր խօսում, ծիծաղում, ամենքի ուշադրութիւնը իրանց վրա են դարձնում, — կարող էք համոզված լինել, որ դրանք ուսանողներ են: Եթէ դիչերը ձեր սենեա-

կում բնած ժամանակ զարթնում էք փողոցում լսվող մի խօրական երգից, — կարող էք հաւատացած լինել, որ դա մի խումբ ուսանողներ են, որոնք ուշ գիշեր մի զբօսանքից, կամ մի պանդոկից վերադառնալով, բարձրաձայն խօրական երգեցողութեամբ քաղաքի փողոցներով են անցնում: Գիշերվայ 11 ժամից ուշ ոչ ոքին չէ թոյլ տրվում որ եւ է աղմուկ անելու, երգելու, — բայց ուսանողների վրա պօլիցեան էլ բացառապէս ներողամիտ աչքով է նայում: Խաղաղ քաղաքացին էլ իր գիշերվայ քաղցր քնից յանկարծ արթնացած փողոցից լսվող ուսանողների խօրական երգեցողութեան ու նրանց գոռում-գոչումների պատճառով, — առանց բարկանալու, ներողամիտ ժպիտը երեսին արտասանում է միայն Ach, es sind wieder die Studenten (Սիւ, այդ ուսանողներն են), եւ իր անկողնի մէջ շուտ է գալիս միւս կողքի վրայ, որպէս զի նորից քնի: Երբ երեկոյեան ժամանակ հանդիպէք փողոցի մէջտեղում անցնող մի հանդիսաւոր գնացքի, որ բաղկացած է անթիւ հետեւակ եւ ձիաւոր երիտասարդներից, օտարոտի միջնադարեան զգեստներով հագնւած, գոյնաւոր գլխարկները գլխներին, լայն գոյնաւոր ժապաւէտները ուսերից դրացած, մէջքին սրերը կապած, մի բանիսը դրօշակներ, իսկ մեծ մասը վառած ցահեր ձեւին բռնած, — իմացէք որ դա ուսանողական մի որ եւ է տօնախմբութիւն է, կամ «ջահաւոր գնացք» է (Fackelzug) ի պատիւ մի որ եւ է սիրած պրօֆէսորի: Եթէ վաղ առաւօտ քաղաքի մի որ եւ է խաղաղ արուեստաւոր, մի կօշիակար, իր խանութը բաց անելիս նկատում է թէ իր խանութի վրա կախված նշանակը գիշեր ժամանակ հանել են եւ նրա փոխարէն մեխել են կօնդիտերի նշանակը, իսկ իրան, կօշիակարի նշանակը կախել են դիմացի գտնուող կօնդիտերի մագազինի վրա, — կօշիակարը իսկոյն հասկանում է թէ այդ խաղը իր գլխին համալսարանի ուսանողներն են խաղացել, մութ գիշեր ժամանակ իրանց հետ սանդուխտ բերած լինելով ու նշանակները փոխիւթել: ... Եւ նա չէ բարկանում այդ անմեղ չարութեան վրա, նա էլ ժպիտը երեսին բաւականանում է արտասանելով. Ach, diese Studenten, հաս-

տառ համոզված լինելով թէ դա ուսանողների գործ է եւ երբէք չի գնայ ոստիկանութեանը գանգատվելու :

Երիտասարդութիւնը ամեն տեղ, ամեն երկրում նոյնն է . զգայուն, վառօդի պէս շուտ վառվող, թէ՛ լաւ, թէ՛ վատ բանով շուտ յափշտակվող : Շվէյցարիայում դարեւոր փորձը, պատմական տրագիցիաները, դարեւոր ականդութիւնները՝ հաստատել են յայտնի յարաբերութիւններ հասարակութեան եւ ուսում՝ առնող երիտասարդութեան մէջ : Բարձրագոյն դպրոցների վարչութիւնները հիմնվելով այդ դարեւոր փորձի վրա, հիմնվելով այն հոգեբանական ճշմարտութեան վրա, թէ դէպի ամեն լաւը եւ դէպի ամեն վատը շուտ վառվող երիտասարդութեան հետ խստութեամբ վարվել, երբ նա մի գաղափարով յափշտակված է, նշանակում է իւղ ածել կրակի մէջ, — չվէյցարական բարձրագոյն դպրոցների վարչութիւնները, ասում եմ, գիտեն ուսանողական ամեն մի շարժման ժամանակ մեծ տակտով, մեծ զգուշութեամբ, որտեղ հարկաւոր է հեղինակաբար վերաբերվել դէպի ուսանողական յուզմունքները :

Կը պատմեմ մի անցք ուսանողական յուզմունքներից, որ տեղի է ունեցել Յիւրիսում իմ այդտեղ անցկացրած ժամանակս եւ որին ակամայ ականատես եմ եղել ես :

Ձմեռը արդէն սկսվել էր . Շվէյցարիայի լճակները, մանաւանդ այդ լճակներից նըրանք, որոնք բարձր սարոտ դիրք ունեն, ծածկվել էին արդէն սառուցով : Ամեն օր, երիտասարդ թէ օրիորդ, կին թէ երեխայ, շտապում էին սահնակօղիները ոտերից կապած, օգուտ քաղելու սառնամանքի օրերից, սառուցի վրա վազելու համար : Սահնակօղիներով սառուցի վրայ վազելը մի մեծ զուարճութիւն է ամբողջ հասարակութեան համար, մեծից սկսած մինչեւ փոքրը : Բայց շատ անգամ, երբ սառուցը բարակ է, նա կոտրվում է իր վրա վազվողների ծանրութեան տակ, — եւ Շվէյցարիայի լճակների մէջ ընկնողի՝ համար այլ եւս փրկութիւն չը կայ . նա խեղդվում է ջրի մէջ, որովհետեւ չվէյցարական բոլոր լճակները, նոյն իսկ ամենափոքրները, շատ մեծ խորութիւն ունեն : Այդ է պատճառը, որ վերջին ժամանակները այդ ձմեռա-

յին զուարճութեան համար բնական լճակները թողած, սկսեցին եւ Շվէյցարիայում չինել ձմեռ ժամանակ սառուցի արուեստական մեծ մակերեսայիններ, երկու արշին բարձրութեամբ ջուր ածելով դաշտի վրա . եւ երբ այդ ջուրը սառչում է՝ դոյանում է մի արուեստական ահագին լճակ, որ ոչինչ վտանգ չէ ներկայացնում, քանի որ սառուցի պէս կոտրվելու դէպքում ջրի մէջ ընկնողն էլ շատ շատ մի սառ բաղանիք կ'ընդունի : Այդ տեսակ արուեստական լճակներից մինը շինվում է քաղաքի մի հեռաւոր Aussersyl անուանված արուարձանում յատկապէս քաղաքի բոլոր դպրոցների աշակերտների եւ աշակերտուհիների համար : Ձմայեցուցիչ մի տեսարան է, երբ ճաշից յետները տեսնում էք այդ սառուցի ահագին դաշտի վրա քաղաքի դպրոցների մինչեւ 2,000 առողջ, կարմրաթուշ, զուարթ մանուկներ վազվզելիս, վժվժելիս, բարձրաձայն եւ ուրախ աղաղակներ արձակելիս : Յիւրիսից մի քանի վերստ հեռու Oerlikon ասված ահագին դաշտը արուեստական կերպով սառուցով ծածկվում է հասակ առածների համար : Իսկ անում է մի ակցիօներական ընկերութիւն, որ, ի հարկէ, չահ էլ ունի այդ ձեռնարկութիւնից : Այդտեղ սահնակօղիներով սառուցի վրա վազելու համար հաւաքվում է Յիւրիսի եւ մօտակայ քաղաքների հասակ առածների ունեւոր հասարակութիւնը . այդ տեղ Յ-Յ հազար մարդ ազատ կերպով են տեղաւորվում եւ մուտքը 1 Ֆրանկ արժէ : Տեսարանը շատ գեղեցիկ է . դա մի տեսակ բացօդեայ ձմեռային պարահանդէս է . գիշերն էլ դաշտը լուսաւորվում է էլէկտրական լուսաւորութեամբ : Հասարակութիւնը անդադար դալիս գնում է . հետեւակների, ձիաւորների, կառքով, սահնակներով անթիւ եկողներ էք տեսնում . բացի սրանից, ամեն մի կէս ժամ երկաթուղու գնացքը բերում է Oerlikonի երկաթուղու կայարանը ի վազօններ սառուցի վրա վազել երկու սեռի սիրողներին :

Բայց, այնու ամենայնիւ, գտնվում են տաք գլուխներ, համարձակներ, որոնց աւելի ուրախութիւն է սպառնաւում իրանց կեանքը վտանգի դնելով, գնալ վազել խական լճակների սառուցի վրա, քան թէ

դաշտի վրա չինած արուեստական եւ ոչինչ վտանգ չը ներկայացնող լճակների վրա :

Մի առաւօտ ամբողջ Յիւրիխում տխրալի լուր տարածվեց , թէ Բազմարուեստեան դպրոցի երկու ամբերկացի երիտասարդ ուսանողներ անհետացել էին : Քաղաքային վարչութիւնը ահաբեկեց , զոյնաւոր թղթերի վրա յայտարարութիւններ կայցրեց փողոցների բոլոր անկիւններում , խոստանալով 500 Ֆրանկ վարձատրութիւն դեմբաղդների գտնողին : Ասում էին որ խեղճ երիտասարդները նախընթաց օրը գնացել էին ոտով Յիւրիխից մի քանի վերստ հեռու գտնվող եւ շատ բարձր դիրք ունեցող փողրիկ , բայց իր խորութեամբ շատ յայտնի , Katzensee լճակի սառուցի վրա վազելու , եւ այնտեղից այլ եւս չը վերադարձան : Անմիջապէս Բազմարուեստեան դպրոցի քիմիկոսների ամբողջ բաժինը , որոնք անհետացածների ընկերներ էին , մի երիտասարդ պրոֆեսորի հետ միասին , թողեցին իրանց պարապմունքը եւ ուղեւորվեցին ձիւնով ծածկված սարերով , ձորերով ու անտառներով դէպի յիշեալ լիճը : Երկար խուզարկութիւններից յետոյ աջողկեցաւ ողորմելի երիտասարդների դիակները գտնել մի գետակի մէջ , որ բղձում է լճակից : Յայտնվեցաւ , որ նրանք վազելիս են եղել լճակի սառուցի վրա , որ դեռ կատարելապէս պնդացած չը լինելով կոտրվել էր , և երկու երիտասարդներն էլ ջուրն ընկնելով խեղդվեցին : Յետոյ ջրի ալիքները քշեցին նրանց անջուռն դիակները դէպի լճակից բղձող գետակը :

Մի քանի օրից յետոյ երկու դժբաղդ երիտասարդներին թաղեցին Յիւրիխում մեծ հանդիսով . ներկայ էին յուզարկաւորութեանը թէ Բազմարուեստեան դպրոցի եւ թէ Համալսարանի բոլոր ուսանողները եւ երկու բարձրագոյն դպրոցների գրեթէ բոլոր պրոֆեսորները : Բայց Բազմարուեստեան դպրոցի դիրեկտոր պ. Գայգէր չեկաւ յուզարկաւորութեան հանդիսին : Ամբողջ ուսանողութիւնը վրդովված էր Գայգէրի այդ անտակտ վարմունքից , մանաւանդ որ վաղուց արդէն պ. Գայգէր իր կոպիտ , կոշտ , անքաղաքավարի վարմունքով դժգոհութիւն էր յարուցել իր կառավարութեան յանձնած Բազմարուեստեան դպրոցի ուսանողների

չըջանում : Դեռ այդ վերջին դէպքից մի քանի օր առաջ պ. Գայգէր չը բարեհաճեց ներկայ գտնվել ամբողջ ուսանողութիւնից սիրված մի երիտասարդ պրոֆեսորի թաղման հանդիսին : Բացի սրանից , Գայգէրից ուսանողութիւնը վաղուց դժգոհ էր , նրա կոշտ , կոպիտ , մանրակրկիտ վարմունքի պատճառով ուսանողների հետ , մանաւանդ նրանց հարցաքննութիւնների ժամանակ :

Եւ ահա այդ բոլոր դէպքերից օգուտ քաղելով , Բազմարուեստեան դպրոցի ուսանողութիւնը վճռեց քաղաքավարութեան եւ մարդասիրութեան մի թեթեւ դաս տալ Պ. Գայգէրին : Կայծակի արագութեամբ համաձայնութիւն կայացաւ երկու բարձրագոյն հիմնարկութիւնների , Համալսարանի և Բազմարուեստեան դպրոցի ուսանողների մէջ , և նրանք վճռեցին հետեւեալ օրը այդպիսի դէպքերում ուսանողների մէջ ընդունված դժգոհութեան մի ցոյց անել պ. Գայգէրին , այն է նրա տան առջեւ « Կապուսեյի երաժշտական » անկէ :

Այն օրը անձրեւային եղանակ էր , եւ ուսանողներից մի քանի հարիւր հոգի , բարձր կօշիկները հագած , ո՛րը չվոցը ձեռին , ո՛րը զանգակ , ո՛րը կոտրած աման , ևն , իսկ նրանցից մինը իր մէջքին ահաբեկ թմբուկ շալակած , թէ ոտով եւ թէ կառքով երեկոյեան ժամը 10 ին ուղեւորվեցին քաղաքից երկու ժամ հեռաւորութեամբ գտնվող Կապուսեյ գիւղը , որտեղ կենում էր Պ. Գայգէր իր սեփական տան մէջ : Գիւղը հասած այդ մի քանի հարիւր հոգի ժողովվեցին Գայգէրի տան առջեւ եւ այդտեղ սկսվեցաւ այն դժոխային աղմուկը , որ ուսանողական լեզուով անուանվում է Կապուսեյի երաժշտական : Մէկը գոռում է , միւսը չվացնում է , երրորդը շան պէս է հաչում , չորրորդը կատուի պէս է մկմկում , հինգերորդը կոտրած ամանի վրա փայտով զարկում , վեցերորդը զանգահարում է , եօթներորդը թմբուկի վրայ է զարկում ևն ևն : Մի եւ նոյն ժամանակ անդադար լռվում է եւ միաձայն Pereat Gaiser (կորչի՛ Գայգէր) աղաղակները : Այդ ձեւով մի կէս ժամ զուարճանալուց յետոյ եւ համոզվելով թէ բաւական պատժեցին անմարդասէր դիրեկտորին , ուսանողները նոյն ճանապարհով վերադարձան քաղաք : Եւ գոհ

իրանց արած աղմուկից, դործը վերջացած համարելով, «արդէն պէտք է ցրուէին իրանց բնակարանները»։ Հանգիստ քնէին ու միւս օրը դասախօսութիւններն ու պարապմունքները իրանց սովորական ընթացքով շարունակէին, — երբ յանկարծ ոստիկանութիւնը մի անդգուշութիւն, մի անտակտութիւն արաւ։ Ուսանողների քաղաքը մտնելու րօպէին ծանր թմբուկ տանող երիտասարդը սակաւաթիւ ընկերներով, բնականապէս ուրիշներից յետ մնաց, — եւ պօլիցիան օգուտ քաղելով թոյլ խմբից, շրջապատեց երիտասարդներին, խլեց նրանցից թմբուկը եւ կալանաւորեց ուսանողներից մինին։ Միւս առաւօտը սարսափելի աղմուկ ընկաւ ամբողջ ուսանողութեան մէջ։ Բոլորը հաւաքւեցին եւ վճռեցին թողնել դասերը եւ պաշարել պօլիցիան։ Աւելի քան յարձակում դործելով պօլիցիայի վրա, նրանց աջողկեց յետ խլել թմբուկը, բայց կալանաւորված ընկերով չը կարողացան ազատել։

Հէնց որ երկու բարձրագոյն դպրոցների վարչութիւնները նկատեցին թէ դործը ծանր կերպարանք է ստանում, անմիջապէս Համալսարանի եւ Բաղմարուեստեան դպրոցի ղեկավորները իմաց տուեցին ոստիկանութեան գլխավորին, թէ պօլիցիան զուր է խառնվում այն դործի մէջ, որի ըննութեան իրաւունքը պատկանում է մի միայն բարձրագոյն դպրոցների վարչութիւններին եւ թէ իրանք միայն իրաւունք ունեն պատժել չարութիւն արած ուսանողներին եւ ոչ թէ պօլիցիան։ Հարցը բարդւեցաւ, բայց մի եւ նոյն ժամանակ եւ իրանք ուսանողներն էլ զգացին այդ րօպէսում իրանց համեմատութիւնը բարձրագոյն դպրոցի հետ եւ հիմա բացի իրանց վիրաւորված պատիւը պաշտպանելուց, նրանք հանդէս դուրս եկան եւ որպէս ոստիկան արած համալսարանական իրաւունքի պաշտպաններ։ Արեւ օր շարունակ դասերը թողած, նրանք շարունակ միտինդներ (ժողովներ) ունէին քաղաքի մի մեծ դահլիճում, որտեղ սովորաբար կօնցերտներ են լինում։ Նրանք վարձեցին իրանց հաշով դահլիճը, վարձեցին մի նուազախումբ (օրկէստր), իրանց միջից ընտրեցին մի նախագահ, — եւ երեք օր շարունակ շատ ճառախօսեցին, շատ վիճաբանեցին, շատ գինի ու դարեշուք խմեցին,

ամեն օր պատգամաւորութիւններ էին ուղարկում թէ համալսարանը եւ թէ ոստիկանապետին, մինչեւ որ պօլիցիայում կալանաւորված ընկերը ազատութիւն ստացաւ եւ համալսարանական վարչութիւնները համաձայնվեցին ուսանողների հետ նորից հաշտվել մի պայմանով միայն, այն է՝ որ համալսարանի շինութեան մէջ ղեկավորը պէտք է հանդիսաւոր կերպով նրանց հայրական կերպով յանդիմանէր իրանց արածի մասին։

Այդպէս պէտք է յիշել, որ չվեցարական ուսանողութիւնը այդ անցքերի ժամանակ առաջին անգամ քայլ արաւ կին ուսանողներին իրանց հետ հաւասար իրաւունքներ ունեցող ընկերներ ճանաչել, երբ միտինդներ սկսեցին տեղի ունենալ, ուսանողները հրաւիրատուականերով հրաւէր ուղարկեցին ուսանողներին դալ իրանց հետ մասնակցել իրանց ժողովներին։ Ահա՛նայք խոհեմաբար հրաժարվեցին այդ պատուից, մի եւ նոյն ժամանակ խօսք տալով որ այնու ամենայնիւ կը պահպանեն ընկերական համեմատութեան գզացմունքը եւ այն բոլոր օրերի ընթացքում որ ուսանողները բարձրագոյն դպրոցներից դուրս կը լինեն, մինչեւ որ հարցը կատարելապէս պարզվի, — նրանք էլ տանը կը մնան եւ չեն դնայ լսարաններ դասախօսութիւնները լսելու։

Վերջապէս ամեն բան հաշտութեամբ վերջացաւ։

Մի բանի օրից յետոյ, երբ եղանակը պարզվեց, քաղաքի ուսանողութիւնը վարձեց մի ամբողջ օրով Յուրիսի լճակի վրա երթեւեկող չուգեհաւերից մինը, հրաւիրեց երկու բարձրագոյն հաստատութիւնների բոլոր պրօֆէսորներին էլ, ղեկավորներին էլ, նոյն խալ յիշված անցքի սկզբնապատճառ եղած Գայդէրին, եւ չուգեհաւը դնողդոյն դրօշակներով դարդարված, առաւօտեան ժամը 9 լին լողաց դէպի լճակի վրա քաղաքից երկու ժամ հեռաւորութեամբ գտնվող գեղեցիկ, անտառապատ Առաւմաճ տեղը, որտեղ կատարվեցաւ մի ուրախ տօնախմբութիւն։ Այդպէս հին եւ նոր սերունդները միասին ամբողջ օր քէֆ արին, երկու կողմից անթիւ եւ ողբերգական ճառեր խօսվեցան, ծերերը մեծ ուրախութեամբ յիշե-

ցին իրանց ճառերի մէջ իրանց երիտասարդական քաղցը օրերը, չեղտելով այն հանգամանքի վրա թէ իրանք էլ երիտասարդ ժամանակը չուտ վառվող, չուտ յափշտակվող էին, — եւ հաշտութիւնը կատարեալ եղաւ :

Այդ զբօսանքին էլ ուսանողները չը մոռացան հրաւիրել իրանց համալսարանական ընկերուհիներին, որոնք այդքան համերաշխութիւն ցոյց տուին ուսանողներին գործի ամբողջ ընթացքի ժամանակ, — բայց սըրանք նորից համեստաբար եւ շնորհակալութեամբ հրաժարվեցան իրանց ցոյց տուած պատուից :

Հռչակաւոր Բէթս-ը մեծ դեր էր խաղում եւ այդ զբօսանքի ժամանակ. ուսանողները նրան էլ չը մոռացան, իրանց հետ վերցնելով այդ թմբուկը. չոգենաւի վրա : Եւ ահա այդ թմբուկը որ մի քանի օր առաջ հին եւ նոր սերունդի, վարչութեան եւ ուսանողների մէջ երկպառակութեան սերմանող էր, այժմ դարձաւ հին եւ նոր սերունդի հաշտութեան նշան :

(ՄԵԱԿ)

Գ. ԱՐԾՐՈՒՆԻ

ՆՈՐԱՎԷՆ

ՁԱՊԵԼԻ ՈՒՍՈՍԿՐՆԵՐԸ

Ըստ Լաֆօնթէնի, մեծ պատճառներէն փոքրիկ արդիւնքներ յառաջ կուգան, լեռ մը մուկ մը կը ծնանի : Բայց առակին անդրադարձն աւելի ճշմարիտ է, փոքրիկ պատճառներէն մեծամեծ արդիւնքներ յառաջ կուգան, մուկէ մ'ալ կրնայ լեռ մը ծնանի, ինչպէս փոքրիկ աղջկան մ'ուսուսկրները կարող եղան կեանքս տակն ու վրայ ընել :

Ուսանող մ'էի, դեռ որ եւ է կին սիրտս գրաւած չէր եւ պարագայներն ամեն ջանքի գործ դրած էին որպէս զի սիրտս պարագայ մնայ՝ եւ դեռ կ'սպասէր այն կնոջ որ քար խնկարկէր զայն սիրով եւ ընդ որ ուրախութեամբ եւ կամ գերի ընէր իրեն : Սովորաբար ազգականաց աղջիկներու հետ կը մեծնայ ամեն մարդ մինչեւ տասն եւ

հինգ տարի : Բայց իմ ազգականացս աղջիկները կամ յոյժ մեծ էին կամ յոյժ փոքր. անոնցմէ ոմանք ծնկուրներու վրայ կը խաղցնէի, ոմանց ալ ծնկուրներուն վրայ ես կը խաղայի : Մնաց որ ես ալ քիչ մը խստապահանջ էի կանանց մասին : Ուստի զգուշութեամբ սրտիս դռները միշտ գոց կը պահէի :

Օրին մէկը Չապէլ եկաւ այդ դրան զարկաւ :

— Կրնամ ներս մտնել, հարցուց :

Ուզեցի խորհիլ, բայց դուռն ինքնին բացուեցաւ. եւ դեռ խելքս գլուխ չփողուած տեսայ որ այդ նոր հիւրը տեղաւորուեր էր հոն :

Մնաց որ ամենէն խստապահանջ սիրտն ալ նա կարող էր գոհացունել :

Խարտեաչ էր եւ դժգոյն, կապոյտ մեծ աչերով (կատարեւապէս գեղեցիկ երեւցող), լէտիի մը նման չիք եւ ընտիր արդուզարդով :

Բայց հակառակ իւր զարդարանաց փայլին՝ մարդ անոր անձին վրայ կ'զմայէր : Անոր աչերն անդամանդներէն աւելի կը փայլէին, իւր վրայ գտնուած ամենէն գեղեցիկ մարգարիտներն իւր ակռաներն էին եւ անոր մարմնոյն գոյնն անդուսին. փայլը կը խաւարեցնէր : Բայց փոքր ինչ... աւելի նրբակազմ էր, (սիրահարաց լեզուին մէջ նրբակազմ կը նշանակէ նիհար) : Բայց այնչափ տանթերներով եւ շղարշով մինչեւ ականջներն ծածկած էր որ այդ նիհարութիւնը չէր նշմարուեր իսկ : Մէկ խօսքով սքանչելի մարմին մ'էր այն՝ որու մէջ կը բնակէր գեղեցիկ հոգի մը, նման ծաղկափթիթ թուփի մէջ սիրասուն թռչնակի մը :

Կարմիր եւ կայտառ երեսներն ինձ հաճելի չեն, այդ տեսակ գեղեցկութիւնը խիստ հասարակ է եւ հաճելի զիւղացուց եւ ցանկասէրներու : Չապէլ լուրջ էր : Մեւ լամպադութիւնն անոր դէմքին վրայ տարածեր էր այնպիսի թեթեւ ստուեր մ'որ անոր իտէական երեւոյթ մը կուտար :

Նիսի մօտ գիւղ մը կը բնակէինք : Զապէլի մօր Տիկինն Հ... ի ամարանոցը մերինին կից լինելով յաճախ իրարու կ'այցելէինք :

Գարնան առաջին ծաղիկներով խնկուած ապրիլի աստղափայլ երեկոյ մ'երկու ընտանիքները մեր պարտէզին մէջ կը պտըտէին : Հորիզոնին վրայ, լուսինն՝ իւր ար-

ծաթափայլ ճակատը բարձրացնելով՝ դաշտավայրին տեղումնիլը կը դիտէր :

Թեթեւ գեփիւռը կէս քնացած թըռչուններն օրօրելով կը սահէր տերեւներուն մէջէն՝ որք միմեանց քսուելով շնկոց մը կը հանէին :

Այդ թեթեւ աղմուկն առուակներուն հեշտ միմունքին խառնուելով՝ լռիկ դաշտաց շնչառութիւնը լինել կը թուէր :

Կանայք եւ աղջկուք հոյլ ի հոյլ ծառուղեաց մէջ կը ճեմէին : Գարնանային այդ երեկոյեան գեղեցկութենէն զգածեալ՝ երազուն կանայք, իրենց ճակատներն յերկիր խոնարհեցուցած էին. սիրտերին փղծկեալ, կը խօսակցէին ծառոց, լուսինն եւ գեփիւռին հետ : Լամարթիին քերթուածներն անոնց գլխուն մէջ կը հծծէին : Թեթեւամիտ կիներն ալ գեղեցիկ կը գտնէին այդ տեսարանը, նման Օբէրայի մը տեսարանին որոյ մէկ յանկերդը կը կրկնէին : Օդին հեշտալի զովութիւնը փոքրիկ աղջկիները կը վրդովէր, անոնց արիւնը սիրտը կը հանէր, կը շիկնէին դողալով՝ իբր թէ համայններու ազդեցութեան տակ գտնուէին եւ թուրիւրուն մօտ երկչոտութեամբ զիրար կը գրկէին.

.....

Ձապէլ առջեւէս կը քայլէր. իւր շրջագլխով դաշտեաց քսուելով՝ անոնց անուշահոտութիւնը ինձ կ'ուղարկէր :

Այրերն, անբան էակներ, սոյն գիշերային հրապոյրը չէին զգար. սիկառը բերանին քաղաքական կամ դրամական խնդրոց վրայ կը խօսակցէին. դրամ եւ չքանքան իրենց աշաց առջեւ կը փայլէին ծխախոտի մուխերուն մէջէն :

Տանը առջեւէն անցանք, սրահին դուռը բաց էր եւ ներսը մութ. յոգնած էի, ներս մտայ եւ նստայ : Քիչ մը յետոյ աւագին վրայ ոտնաձայն մը լսուեցաւ և սպիտակ ստուեր մը դռնէն ներս մտաւ աչերս որ մթութեան վարժուած են, կրցան որոշել թէ՛ ներս մտնողը կին մ'էր . . . Ձապէլը :

Առանց զիս նշմարելու դաշնակին առջեւ դնաց եւ սկսաւ Շուպէրի մի խոհեղը նուագել :

Անշարժ, անմուռնչ կ'ըմպէի զուարթութեամբ եւ վշտով հիւսուած սոյն եղանակը, որ զիս մերթ լիւրի հանգարտութեամբ եւ մերթ անհուն տրտմու-

թեամբ կ'որրէր : Հոգւոյ բարձրացումն եւ անկումն էր այն, յուզման եւ անդորրութեան ներդաշնակ փոփոխում մը : Յանկարծ երաժշտութենէն յափշտակեալ ոտքի ելայ եւ Ձապէլի քովը դացի : Նա չնշմարեց իրեն մօտենալս : Դողդոջուն ծռեցայ անոր ուսին վրայ : Նուագն երթալով կ'անուշար : Հնչուն ձայներ կը սողային դաշնակին մէջէն : Կարծես սրինգի մը հառաչներն էին, միանգամայն սիրտտենչ եւ տրտում կնոջ մը ձայնին աղու քաղցրութեան նման : Յետոյ երգը դանդաղեցաւ : Հեղձամղձուկ ձայներ երկար հեծկտանքի մը մէջ նուաղեցան :

Կը դիտէի Ձապէլի սքանչացեալ դէմքը, գոյ աչերն ու արտասուծք ողորուն այտերը :

Իւր կիսաբաց շրթանց վրայ անընդհատ հեծութիւն մը կը ծածանէր, իբր թէ իւր հոգին պիտի հատնէր ներդաշնակութեան մէջ : Մատերը դաշնակէն վար սահեցան եւ ձայնը կտրեցաւ : Շունչիս տակ իւր աչերը բացաւ. այնչափ յուզեալ էի որ չը կրցայ ետ քաշուիլ : Զիս տեսածին պէս, դողդոջեց, ճիշ մ'արձակեց, յետոյ վայրկեան մը անշարժ եւ անորոշ մնաց :

Իսկոյն իւր ճակատը իմինիս հպեց, եւ աչերն աչերուս յառեց : Մինչեւ իսկ ուղեց զիս համբուրել, բայց չը համարձակեցաւ եւ այտիս վրայ մի միայն քաղցրիկ շունչ մ'զգացի :

Յանկարծ, երազէ մ'արթննալու պէս, ոտքի ելաւ դուրս երթալու համար : Դռնէն դուրս ելնելու միջոցին ինձ դարձաւ եւ ժպտելով փախաւ :

Ուրախութենէս կը դողդոջէի : Դաշնակին մատերն համբուրեցի որ տակաւին անոր ձեռներուն տաքութենէն տամուկ էին : Շուրթերուս տակ մեղմօրէն ձայն հանեցին. կարծես թէ Ձապէլի ձայնն էր այն :

Այսպէս յայտնեց ինձ իւր սէրը :

Սոյն գիշերը հազար տեսակ յիմարութիւններ ըրի, երգեցի, հեռուէն լուսինը համբուրեցի, եւ ննջելէ առաջ ինքզինքս համբուրեցի :

Նոր կեանք մ'սկսաւ մեզ համար. թէև քիչ մը տենդալից, բայց եւ այնպէս հրապուրիչ էր զմեզ զարմացնելու չափ : Սէրը մեր միտքը կը զարգացնէր, անծանօթ գաղափարներ կը պաշարէին զմեզ : Կ'սկսէ-

ինք աշխարհի ինչ ինքին հասկնալ։ Ես մարդ կ'ըլլայի եւ Զապէլ կին։ Անոր գեղեցկութիւնն օրէ օր կ'աւելնար։ Նորահաս աղջկան մը բոլոր շնորհօքը կը փայլէր։ Իւր աչքերն աւելի եւս կը բացուէին իւր թէ նոր հորիզոն մը կը տեսնէր։ Իւր ոտքերն այլ եւս այնքան թեթեւութեամբ չէին քայլէր, այլ կը քայլէին առաջին անգամ սիրային մտածմունքներով պաշարեալ կնոջ մը տկարութեամբ։

Այնքան պարկեշտ էր նա՝ որ քրոջ մը նման սիրել կը կարծէի։ Երբէք սիրային խոստումներ չ'էինք ըներ։ Բայց որչա՛փ լաւ իրարու միտք կը հասկնայինք։ Ամեն պարագայի մէջ նա ինձ համակարծիք կը գտնուէր եւ ես ալ անոր․ բնաւ ժամադրութիւն չ'էինք ըներ․ բայց միշտ մեր կարծեաց պէս մենք սլ իրարու կը հանդիպէինք։

Զիրար տեսածնուս պէս երկուքս ալ կը կարմրէինք աշուրնիս եւ գլուխնիս խոնարհեցուցած։

Այլ եւս ինձ հետ գտնուած ժամանակ նայուածքի եւ ձեւերու այնպիսի համեմատութիւն կընէր որ լեզուս բերնիս մէջ կը կապէր եւ կը դողացնէր զիս։ Զմեզ տեսնողն երկու յանցաւոր պիտի կարծէր, մինչ մենք երկու երջանիկ տղաքներ էինք։

Քիչ մը վերջն այդ փոխադարձ երկչոտութիւնը տարօրինակ կը թուէր մեզ։ Գողունի նայուածքով մը զիս կը դիտէր․ աչերնիս իրարու կը հանդիպէին, խնդալէն կը մարէինք եւ թեւս կ'առնէի զայն։ Այն ատեն պարտէզին մէջ երկար չընթացայութիւններ կ'ընէինք կամ լճակին վրայ մակոյկովս կը պտըտէինք։ Ո՛հ, այն լճակին վրայ անցուցած երեկոյներնիս։ Զապէլ մակոյկին առջեւի կողմը կը նստէր եւ ձեռքը բռնած հովանոցին տակ իւր դէմքը կատարեալ նրբութեամբ կը փայլէր։

Ես կը թիալարէի աչերս անոր վրայ յառած․ արեւը լճակին ջուրը կը շողացունէր։ Մեր նաւուն գլխէն արծաթափայլ նշոյլներ կը ցլանային։ Ետեւի կողմէն միլիոնաւոր կայծեր կը ճարճատէին եւ թիւերէն հրեղէն մարգարիտներ կը կաթկթէին։ Անմուռնչ կը սահէինք շողշողուն ջուրին վրայէն։ Բառ մ' իսկ չէինք արտասաներ։ Տաքէն փոքր ինչ գինովցած, այդ պատուական լուսութեան մէջ կը թմրէինք։ Իրի-

կուններն երբ ձորին վրայ մշուշ կը պատէր կամաց կամաց գետեզրին կը մօտենայինք․ մեր դիմացը ջուրին վրայ արեւմտեան վարդագոյն երկինքը կը փայլէր քարտէզին ծառերուն ետեւէն, որոնց ծայրերն օդին մէջ անշարժ կը կենային։ Յաճ ճիւղերուն վրայի տերեւները կ'սկսէին մթադնիլ։ Գետափը մեր աչաց առջև կը պարզէր իւր մարգագետինքը զոր տեղ տեղ կը լուսաւորէին արեւուն խոտորուն ճառագայթները ծառոց կոճղերուն մէջէն սպրդելով։ Ահագին հայելիի մը պէս փայլուն ջուրին մէջ կը ցլար պարտէզն իւր ծառերով հանդերձ։

Զապէլ եւ ես լճակին զով օդէն հովահրած՝ թափանցիկ վերջալցսին հանդարտութեան մէջ՝ մեր նայուածքներն իրարու կը խառնէինք։ Նա մեզմիկ կ'երգէր․ իւր ձայնը՝ թիւերուն հանած միմունջին խառնուած՝ ուղղակի յ'երկինս կը բարձրանար։ Խաղաղիկ գիշերուան մը մէջ վառուած կրակի մը ծուխին նման։

Գետեզրին վրայ, ծնողքնիս մեղ կ'սպասէին։

— Օ՛հ, տղայք, ժամանակն ուշ է, վերադարձէք։

Զապէլ, քիչ մ'ամօթահար, մօրը թեւը կը մտնէր, միմեանց հրաժեշտի ողջոյն կուտայինք, եւ դանդաղաքայլ հօրս կը հետեւէի, երկնային ուրախութեամբ ողողուած։ Աչերս դոցածիս պէս կը տեսնէի շողշողուն լճակը՝ բոցերով ծածկուած, կայծերով զարդարուած եւ առջեւս՝ չարժուն ոսկեղէն ջուրին վրայ կը տեսնէի Զապէլի մակոյկին առաջակողմը կէս՝ պառկած տաքէն թմրիլը։

Երբեմն տղայական խօսակցութիւններով օրերնիս կ'անցնէինք․ երբեմն բանաստեղծական գիրք մը կ'առնէի եւ մամուռին վրայ քերթուածներ կը կարդայինք։ Գրքին ամեն մէկ երեսին տակը կ'սպասէի որ Զապէլ լմնցնէ։ Կը դիտէի զայն՝ որ իւր նուրբ դէմքը ծուած՝ խարտեալ խօսակցիքներն աչքերուն վրայ ինկած, չրթուքները կը չարժէր։

Ֆլօրանթէի անուշ կերպարանք մ'ունէր նա․ յաճախ կանգ կ'առնէինք։ Այս աւելի անուշ ընթերցանութիւն մ'էր․ անոր նայուածքն ու մեղամաղձոտ ժպիտը կը վայէ-

էի : Օր մը , Վիքթոր Հիւկոյի «Ուրուսակն»ը
լննցուցած ատեննիս , սկսաւ լալ . իսկոյն
իմ ալ արտասուեցաւ շարժեց :

Անիմաստ եւ սիրուն բան մ'էր ըրած-
նիս :

Չապէլ իւր մօրը հետ ամիս մը Փարիզ
պիտի երթար անցունէր :

Երբոր զինքը երկաթուղւոյ կայարանը
տանող կառքն աներեւոյթացաւ , սոսկալի
դատարկութիւն մ'գգացի : Չապէլ սիրտս
միատեղ տարած էր : Տանը մէջ անհաւա-
սար քայլերով կը թափառէի երկար հա-
ռաչներ արձակելով : Բարեկամուհւոյս հետ-
քերը կը փնտռէի :

Բացի այն դաշնակն՝ ուր դիշեր մը Շու-
պէրի խոհերգը նուագած եւ ես մութին
մէջ մոտիկ ըրած էի . փորձեցի սոյն եղանա-
կը նուագել :

Իմ գտած ներդաշնակութիւններս վըշ-
տագին կը հնչէին սրտիս եւ կ'արթնցնէին
գլխուս մէջ յիշատակներ՝ որք քաղցր ու տը-
խուր ձայնիւ երգելով ուժաթափ ըրին զիս .
ձեռքերս ինկան դաշնակին մատերն հնչե-
ցնելով :

Դուրսը՝ ծառի մը տակ նստայ , ուր
Չապէլ սովորաբար կը հանդէս . բայց հոն
ալ չ'կրցայ կենալ : Գրգռեալ , արունքներս
կ'թոտեալ կը քալէի . . . կը քալէի : Նա-
ւալս լճակին մէջ կը ննջէր , մէջը ցատկեցի
եւ սկսայ ուժգին թիալաբել : Հովը զիս
դէպի գետեզր քչեց : Երկինքն ամպերով
ծածկուեցաւ եւ ջուրն սկսաւ կապոյտնալ :
Փոթորկալից անձրեւ մ'սկսաւ գալ : Բնու-
թեան այդ համակիր տխրութիւնը զիս
սփոփեց : Քաղցր է երկու հոգի միատեղ
արտասուել : Երկար ատեն դուրսը կեցայ ,
հովին հառաչանաց դէմ եւ երկնից ար-
տասուօք ողորուած :

Այն ամիս բոլորովին գոյնս նետեց եւ
նիհարցուց , աչերուս փայլն սկսաւ մարիլ ,
ձայնս կը նուաղէր եւ շարժումներս կը
դանդաղէին : Մտածմունքներս որ առաջ
բարեկամուհւոյս հաղորդելով կ'սփոփուէի ,
այժմ հոգւոյս խորը մնալով կ'եղծանէին
զայն եւ կը խեղդէին զիս : Անյազարար
կանանց ընկերութիւնը կը փնտռէի : Անոնց
ձեւերուն , ձայնին , դիմաց եւ հագուստ-
ներուն մէջ Չապէլի նմանութիւնը կը փնտ-
ռէի : Մօրս հետ երկար շրջագայութիւն-

ներ կ'ընէի եւ կը տանէի զայն այն ուղի-
ներն զորս կը սիրէր Չապէլ , եւ գլուխս
դարձնելով կը կարծէի թէ թեւս առած էի
զայն : Ստէպ կը համարէի քոյրս , անոր
աչաց մէջ ջանալով փնտռել բան մ'որ իմ
սիրելիս յիշեցնէր : Դժբաղդաբար , խեղճ
աղջկը թուխ եւ ժիր էր : Անոր ակնարկ-
ներուն փայլը կը վիրաւորէր զիս : Բարեկա-
մուհւոյս կապոյտ աչաց գորովալից նայ-
ուածքը չ'ունէին :

Սկսայ ամուսնութեան վրայ մտածել .
հաշիւ ըրի թէ՛ մեր ամուսնութիւնը կրնար
կարելի . . . հաւանական . . . եւ վստահ
լինել : Անճոռնի ոտանաւորներ չ'ինեցի ա-
մուսնոց երջանկութեան վրայ :

Տիկին Հ . . . վերադարձածին պէս պա-
րահանդէս մը տուաւ :

Չապէլ կ'ուշանար : Մինչ քանի մ'ան-
համբեր զոյգեր դատրիլ մը կ'սկսէին , մեծ
սրահին մէջ կը ձեմէի , այնպիսի մարդու մը
դէմքով՝ որ իւր սեղանաւորին իւր ունեցած
բոլոր հարստութիւնն առած փախած լի-
նելուն լուրը նոր կ'իմանայ :

Դէմքս աղօթացած էր : Այդ բան ստէպ
կը պատահի ինձ :

Չապէլ ներս մտաւ :

Այն տարին՝ առաջին կայսրութեան ար-
դուադարդն յոյժ յարգի էր : Չապէլ իւր մա-
զերուն մէջ հռովմէական թագ մը դրած
էր : Իւր վարդապոյն շրջագգեստը , Բուլտո-
մի պատկերին մէջ ներկայացուած Ժօզֆ ֆին
կայսրուհւոյն հագուստին ձեւով կտրուած
էր . ուսամերկ բաճկոնակ մը (corsage)
հագած էր , լայն գօտի մը . շրջագգեստին
վարի մասը տափակ եւ սեղմուած էր ա-
ռանց կրկնակերպասի : Առաջին անգամն էր
որ Չապէլն այսպէս հագուած կը տեսնէի ,
կամ լաւ եւս հանուած : Աւա՛ղ , նրբակազմ
չէր , այլ նիհար , նիհար՝ տգեղ երեւնալու
աստիճան : Տխրագգաց մարդկանց ակումբի
մը խառնուեցայ փոխանակ երթալու զինքն
ողջունելու :

Նստեցաւ : Իւր նայուածքն սեւաղ-
գեստ մարդոց վրայ չրջեց վերջ՝ եկաւ
յառեցաւ իմ վրայ : Այդ նայուածքէն նեղ-
ուած՝ սկսայ ամենայն ուշադրութեամբ կօ-
չիկներուս ծայրը դիտել :

Դաշնակն սկսաւ վալսի մը նախերգը նը-
ւագել : Երեք երիտասարդներ յառաջացան

Զապէլը պարի հրաւիրելու համար։ Բայց չտեսնել ձեւացնելով զանոնք, գլուխն իմ կողմն ծռեց եւ իւր սիրովաւ աչերով ինձ նշան մ'ըրաւ, զարմացած իմ անհոգութեանս վրայ։ Զը համարձակեցայ գէմ կենալ եւ դէպ անոր յառաջացայ։ Դեռ չը հրաւիրած զայն, զինքը չըջապատող երիտասարդաց ուսոց վրայէն ձեռքն ինձ երկնցոց։ Յապուշ կրթեալ ետ քաջուեցան, մին դժկամակած, միւսը չարամիտ ժպիտով եւ մին ալ հառաչելով։

Երջանիկ երիտասարդք։

Երջանիկ երիտասարդք։ Աւա՛ղ։ Զապէլ պարելու համար հանեց սպիտակ մետաքսէ թեթեւ շալ մ'որ իւր ուսերը կը ծածկէր։ Ինձ այնչափ նիհար երեւցաւ իւր սքանչելի ուսերով, դուրս ցցուած ոսկրներովն եւ իւր գաւազանի բարակութեամբ թեւերովն՝ որ աչքերս դոցեցի անոր մէջքէն բռնած միջոցիս։ Սկսանք դառնալ։

Մորթին տակ իւր բոլոր ոսկրներուն շարժիլը կը տեսնէի։ Դպրոցի անդամազըննական դասերս յիշելով՝ անոնց անունները ցած ձայնով եւ դառն ժպիտով մը կը կրկնէի։ Սէրս մարեւու վրայ էր։ Սոսկալի վիշտս զսպելով ըսի անոր։

— Դիզեցիկ արդուգարդ մ'ըրեր էք...

— Այնպէս չէ՛, ըսաւ պճնասիրաբար։

— Բայց, յոյժ բաց է։ Երբեմն այնպէս բաներ կան զորս աւելի լաւ է դուշակել քան թէ տեսնել։

Զարմացած երեսս նայեցաւ։ Ես կը բորբոքէի։

— Արդարեւ կանայք կը սխալին այսպէս ուսերնին մերկացնելով այդ բան հըռովմայեցի կանանց կը վայլէ, որք կաւարեալ մարմին ունին. բայց ոչ այժմու կանանց համար, որք կամ չափազանց գէր են կամ յոյժ նիհար՝ որ աւելի գէշ է։

Եւ ինչպէս որ նորատի աղջկանց խուճիկ մը քովէ կ'անցնէինք,

— Զգուշացէք որ ձեր չըջազգեստը չը սխալեք այդ սքանչելի ուսերուն եւ արմուկներուն հանդիպելով։

Եւ վանկերը չափելով,

— Ես, կը գարչիմ նիհարութենէ։

Բոլորովին կարմրած՝ սարսուռաց եւ գլուխն այնքան խոնարհեցուց որ իւր դիմաց արօտայտութիւնը չը կրցայ որոշել։

Անոր յուզումէն վախնալով, լռեցի։ Եւ որովհետեւ սկսեալ էինք աւելի արագ վալսեմ, հարկ եղաւ քիչ մ'աւելի իւր ուսին վրայ ծռիլ. նոյն պահուն տեսայ... վերջին հարուածն էր այս։ Նշմարեցի անոր ուսոսկրներն զորս իւր ուսամերկ բաճկոնակը բոլորովին բաց թողած էր ետեւի կողմէն։ Այդ ոսկրներն ամենէն դժնդակ մասն էին այն սոսկալի նիհարութեան զոր յուսահատութեամբ դիտած էի։ Ամեն չարամիտն նոցա եղանկիւն կողերը կ'ենէին կ'իջնէին ու կը ցնցուէին. այնքան սքանչելի էին որ դիտես թէ մորթը պատուելով դուրս պիտի ելնէին։ Վերջապէս բոլոր ոսկրները կ'երեւէին եւ կրնային համրուիլ։

Սէրս բոլորովին մարեցաւ, այլ եւս չէի սիրեր զայն։

Վալսը լմննալուն պէս Զապէլն իւր տեղը տարի։ Իւր արտասուալից եւ քաղցր աչքերն իմ վրայ յառեց։

— Ի՞նչ ունիք... միմեջեց դողդոջուն։

Անարգալից այնպիսի ականարկ մը ձգեցի անոր վրայ որ դեղեկեւելով գետինն ինկաւ։

Նուաղած վերուցին տարին զայն։

Անձրեւի նման իմ վրայ տեղացած հարցմանց կը պատասխանէի։

— Տաքութենէն է։

Եւ պարտէզ լճայ Մառիլանի գլանիկ մը ծխելու։ Այս ծխախոտը Հավանայէն աւելի կ'արժէ երբ բաւական չոր ըլլայ։

* * *

Զորս տարի անցած էր։

Ես սիրահարական մանր մուկ խնդրներ ունենալով Զապէլը մոռցած էի։

Անշուշտ աւելի նիհարցած ըլլալու էր եւ պարտ էր նմանիլ արտերու մէջ տնկուած խրտուիլակներու։ Մնաց որ ես ալ անոր վրայօք տեղեկութիւն խնդրած չէի ընտանիքէս, որ կարծելով թէ այդ յիշատակն ինձ համար խայթիչ ցաւ մ'էր, բնաւ խօսքը չէին ըներ ինձ անոր վրայ։

Դեկտեմբերի մէջ իրիկուն մը, տիկին Զ... տունը պարահանդէսի մը հրաւիրուեցայ, ուր բնաւ ոտը կոխած չէի։ Աեւ հագուստներս հագայ, — որ մեր ժամանակի նորաձեւութիւնն է. այդ տխուր դոյ-

նը — և Տիկին Զ. . . ի տունը գացի : Երկո-
տասանեակ մը մարդիկ ինձ նման յուզար-
կաւորութեան հագուստ հագած գոյնզգոյն
չըլագգեստներու կը ժպտէին : Տան տիրու-
հին ողջունելու գացի , որ խկոյն գիս ներ-
կայացուց շատ մը նշանաւոր տգեղ աղջիկնե-
րու զորս անպատճառ ինձ հետ պարել տալ
կ'ուզէր : Բայց ես քաղաքավարութեամբ
կ'ողջունէի զանոնք եւ կը հեռանայի :

Ճարը հատած , Տիկին Զ. . . վերջապէս
գեղեցիկ խարտեալ կնոջ մը ներկայացուց
զիս :

— Զապէլ , քեզ կը ներկայացնեմ Պարոն
Ք. . . :

Է՛ , ի՛նչ , արդեօք երա՞զ կը տեսնէի . . .
Թէ եւ քիչ մ'անոր կը նմանէր . . . բայց
ոչ , յիշաւ լաւ չէի յիշեր , խենդի պէս էի :

Վալս մը կ'սկսէին , հրաւիրեցի զայն եւ
ընդունեցի :

Պարուհիս սքանչելի էր , կապոյտ մեծ
աչերով եւ խարտեալ մաղերով . նա մա-
նաւանդ սքանչելի ուսեր ունէր : Սպիտակ ,
գէր , կտր էին եւ անդի ծայր փափուկ :
Լեցուն եւ գեղեցիկ պարանոց մը շնորհալի
կերպիւ իւր ուսերուն կը կցուէր :

Ա՛հ , ի՛նչ գեղեցիկ մորթ էր այն՝ որ
սպիտակ սնդուսի մը պէս կը փայլէր ճը-
րագներուն շողողուն լոյսէն :

Յիրաւի Զապէլը չէր կրնար բլալ :

Մինչեւ այն ատեն բնաւ իրարու հետ
խօսած չէինք :

Վերջապէս պարուհիս ըսաւ .

— Տեսէ՛ք սա կինը , ի՛նչ սոսկում :

— Բայց , ոչ , գէշ չէ , թերեւս քիչ մը
ներեւակաւ կ'երեւի . . .

— Կարելի է , բայց ես , ինչպէս գիտէք ,
կը գարշիմ նիհարութենէ :

Պարը լմացաւ :

Ա՛ , ուրեմն նոյն ինքն է՛ , վա՛յ չարաճճի ,
բայց ես բողբոլին յուզեալ էի : Տեսայ այն
գեղեցիկ եւ ողորկ ուսերն ուր անկարելի
էր նշմարել իւր ուսողներն եւ միւս ոս-
կըրներն որ առաջ այնքան որոշակի կը նըշ-
մարուէին : Մարած սէրս նորէն կ'արծար-
ծէր , աւելի սաստիկ , աւելի զօրաւոր քան
երբէք : Զինքը նորէն տեսնել կ'ուզէի , իր-
մէ ներողութիւն խնդրելու համար : Ա՛հ ,
դեռ կրնայի երջանիկ ըլլալ : Տեսայ որ դէպ
ի ջերմանոցը կ'երթայ , ետեւէն գացի :

Թուի երիտասարդի մը մօտ դնաց որ

տերեւներուն մէջ գլանիկ կը ծխէր : Խօ-
սակցեցան իրարու հետ , բայց բաւական
հեռի ըլլալու չը կրցայ լսել ըսածնին : Զա-
պէլ երիտասարդին թեւը մտաւ եւ դէպի
ինձ մօտեցաւ :

Դողդալով թուփի մ'ետեւ պահուը-
տեցայ :

Խօսակցութիւննիս սկսայ լսել .

— Շատ գեղանի ես այս իրիկուն ,
սիրելիս , ըսաւ գեղեցիկ երիտասարդը :

Ամպ մ'աչերս կը վարագուէր եւ ականջ-
ներուս մէջ մեղուներ կը բզզային :

— Իրա՞ւ կ'ըսես , ըսաւ : Զապէլ , ուրեմն
համբուրէ՛ զիս :

Համբոյրներու երկար շունչ մը լսուեցաւ :

Անոնց առջեւ նետուեցայ , մխիթ կտրած
եւ կատաղի աչօք :

— Ա՛ , հո՞ս էք , ըսաւ ինձ Զապէլ խըն-
դալով , ուրեմն կեցիք որ ձեզ ներկայացը-
նեմ ամուսինս . . . :

Ժեւ Ե. Բ. Լ. Բ.

Տ. Զ. Պ. Ա. Ն. Ա. Ն.

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ՓԻՏՈՒՆ ՓԻՂՆԵՐ

Փիղերուն իմացականութիւնը . — Ափրիկեան եւ
ասիական ցեղն . — Որոշիչ հանգամանքներ . — Հըն-
դիկ փղին ընտելացումը և կրթութիւնը . — Պլինիոսի ,
Առիէնի եւ Պիւֆֆոնի տեսութիւնը . — Փիղն երա-
ժշտասէր եւ լարախաղաց . — Ճոք եւ ճէննի . —
Հաւասարակշռութեան փորձեր . — Տատանոց . —
Փիղն սրուակներու վրայ . — Երաժշտութիւն և պար .
— Փիղերուն ճաշը . — Արագոտն :

Յրանսական Լ. Նալի- գիտական շա-
բաթաթերթի վերջին թիւերէն միոյն մէջ
հետաքրքրաշարժ յօդուած մը հրատարակ-
ուած է «Պիտուն փիղերն» վերնագրով ,
յորում ցոյց տրուած է իմացականութեան
այն աստիճանն որում կրնայ հասնիլ ասիա-
կան եւ ափրիկեան անտառաց այդ վիթ-
խարի հսկան : Տեղը չէ աստ ընտելան պատ-
մութիւնն ընել այդ անասնոյն որուն վրայ
քիչ շատ ամեն ոք տեղեկութիւն ունի : Լ.
Նալի-ի մէջ ալ արդէն խօսուած է մի մի-
այն փիղին իմացականութեան վրայ , որ կըր-
նայ ճկիլ ամեն հանգամանաց . բայց աստի
փիղն ունի ընտելացման յարմարութիւն մը
որ ուրիշ ոչ մէկ անասնոյ բով կը գտնուի .
հակառակ իւր ուժին եւ պաշտպանողական

միջոցներուն՝ կը հնազանդի մարդուս հրամանաց . վերջապէս , հակառակ իւր արտաքին տեսքին , լարախաղացի ճշմարիտ տրամադրութեամբ օժտեալ է :

Խնացականութեան զարգացման , որպէս նաեւ ուժի , ճարպիկութեան կամ դիւրաշարժութեան փորձեր կատարելու յարմարութեան տեսակէտով , փիղն ի ծնէ տրամադիր է գիտուն կենդանի լինելու :

Սակայն հարկ է զանազանել փիղերու երկու մեծ ցեղերն , Ափրիկէի ցեղն եւ Ասիոյ ցեղն . երկուքն ալ իրարմէ կը տարբերին ուրոյն ուրոյն հանգամանքներով : Ափրիկէի փիղը կ'որոշուի գլխոյն ձեւով որ աւելի կլոր է . ճակատն ուռուցիկ է փոխանակ տափակ լինելու . նաեւ իւր ականջները շատ աւելի երկար են . այս վերջին հանգամանքը միայն կը բաւէ առաջին անգամէն զանազանելու երկու ցեղերն : Ափրիկէի փիղն երեք եղունգ ունի իւր ետեւի ոտներուն վրայ , իսկ միւսը՝ չորս : Իւր մորթն աւելի գորշագոյն է : Ակռայները նոյն չեն . Ափրիկէի փիղն միայն մէկ ազօրիք ունի մէն մի ծամելեաց վրայ , մինչդեռ Ասիոյ փիղն երկուք ունի . մնաց որ ափրիկեան ցեղին ակռայներն աւելի զարգացած են քան միւսինը : Ճարտարութեան մէջ գործածուած փղոսկրն ողջոյն Ափրիկէէն կուգայ մեզ : Օրինակի համար , Գոնկոյի փղոսկրին վաճառականներն յաճախ բնիկներէն կը գընեն փղի ակռայներ 2 եւ նոյն իսկ 2 . 80 մեդր երկայնութեամբ եւ 50-60 քիլոկրամ ծանրութեամբ . հնդիկ փղին ակռայներն երբէք չեն հասնիր այդ մեծութեան :

Ափրիկէի փիղն եւ Ասիոյ փիղն , բնաւորութեան տէսակէտով , միմեանց համար քաջութեան եւ անձնուիրութեան նոյն յատկութիւններն ունին . այս մասին բազմաթիւ սրտայոյզ օրինակներ կը յիշուին , թէ ինչպէս մատաղատի փիղեր չեն ուզած քանել իրենց մօր դիակին . թէ ինչպէս ծերունի փիղեր դիմադրուած են որսորդաց կրակին՝ պաշտպանելու համար վիրաւոր ընկեր մը , փորձելով նեցուկ լինիլ նմա , քաշել տանիլ զայն իրենց հետ անտառին մէջ . թէ ինչ կատաղութեամբ կը հետապնդին թշնամոյ մը ետեւէն . թէ որքան են վըրէժխնդիր յարձակման մը , վէրքի մը համար եւ եւ :

Սակայն Ասիոյ փիղն այդ բարեմասնութեանց կը միացնէ ուրիշ շատեր որոցմէ զուրկ է իւր ափրիկեան ցեղակիցն . Ասիոյ փիղն միայն կրնայ ընտելանալ , եւ մի միայն անոր ծառայութիւնը կրնան օգտակարապէս գործածուիլ : Ափրիկէի փիղը կրնայ զսպուիլ , այլ չունի հնազանդութեան եւ հլութեան յատկութիւններն զորս կ'ըստանայ ասիական փիղը : Ափրիկէի փիղն հետ մարդ միշտ վախնալու է ըմբոստութենէ կամ փախուստէ :

Հնդիկ փիղն ընտելացումն ընդհակառակն բաղդատաբար դիւրին է . երբ վայրի փիղ մը թակարդին մէջ ընկած է՝ չնորհիւ արդէն ընտելացած փիղերուն մատնութեան , երբ անդամները կապուած են հաստ չուաններով , երբ չարաչար գանակոծուած եւ քանի մը օր բացարձակ նօթութեան դատապարտուած է , հէգ կենդանին , սովատանջ , յուսահատած այդ յոգնաթիւ գըծբաղդութիւններէն , կատաղութեան տադնապներէ յետոյ , կը համակուի խորին վհատութեամբ . եթէ այդ պահուն մարդ մը անունդ տայ նմա , քաղցր խօսքեր ըսէ նրմա , զայն սիրտիւն երեւոյթն ունենայ , փիղն իւր սովորական ուշմութեամբ կը տեսնէ ի նա բարեկամ մը , եւ երբոր սա , շաբաթ մը զայն խնամելէ եւ անուցանելէ յետոյ վերջապէս քակէ կալանաւորին կապերն , փիղն այնքան երախտապարտ կը լինի որ անսահման անձնուիրութիւն եւ հնազանդութիւն կ'ուստէ նմա :

Սյն ատեն է որ կ'սկսի «փիղին կրթութիւնը» . նորեկը կը դուրսի ուրիշ երկու ընկերաց մէջտեղ որը իւր կրթիչները պիտի լինին . ոչ միայն ցոյց կուտան նմա թէ ինչ պիտի ընէ , այլ կը պատժեն եւ կը զսպեն զայն երբոր անհնազանդ լինի . մարդ նոյն իսկ կը փորձուի հաւատալ թէ նոքա մեծ հաճոյքով կը կատարեն այդ վերջին պաշտօնը , տեսնելով թէ իրենց կնճիթով ի՞նչ ուժգին հարուածներ կը տեղացնեն գլխուն եւ մանաւանդ ըթին ու ականջներուն . այդ հարուածներէն իւրաքանչիւրը կրնայ դիտապաստ գետին փուկ եղ մը . եւ երբ վերջապէս փղապանը կուգայ վերջ տալ իւր պաշտպանելոյն չարչարանաց , այս վերջինս կը տեսնէ ի նա ո՛չ թէ մեղսակից մը , այլ պաշտպան մը , եւ իւր երախտադիտութիւնը կ'առաւելու :

Քանի մը շարժւած վերջ, այդ ի վաղուց ընտելացեալ ընկերաց մէջ ապրող փիղն կը թուի կորսնցնել իւր անտառաց եւ վայրի կեանքին յիշատակն, կը հնազանդի իւր փըղապանին, կ'աշխատի, բեռներ կը տանի և կը կրէ, վերջապէս կը կատարէ առաւել կամ նուազ հետաքրքրաշարժ բաներ, ըստ իւր անձնական իմացականութեան կամ ստացած կրթութեան:

Ուրիշ տեսակէտով մը, փիղին կրթութիւնը կրնայ յառաջ տարուիլ այն կերպիւ որ անասունն յաջողի արժանանալ «գիտուն» կամ գէթ «լարախաղաց» տիտղոսին:

Հին հեղինակները մեզ թողած են բաւական պատմութիւններ գիտուն փիղերուն վրայ: Այսպէս, ըստ Պլինիոսի, «փիղն անասնոց մէջ ամենէն աւելի կը մերձենայ մարդկային իմացականութեան: Կը դիտէ, կը խորհի եւ կը յիշէ՝ կը հասկնայ մարդկային լեզուն. կը խօսակցի իւր նմանեաց հետ եւ առանձին սէր մը ցոյց կուտայ գեղարուեստից եւ գեղեցիկ դպրութեանց համար»: Առիէն կը պատմէ թէ տեսած է փիղ մը որ երկու ծնծղայ ունէր իւր առջևի երկու սրունքներուն վրայ, երրորդ մը կընծիթին ծայրն՝ որով փոխն ի փոխն եւ ըստ չափու կը զարնէր երկու առաջնոց վրայ եւ այս կերպիւ պարել կուտար մատաղ փիղերու խումբ մը: Բաց աստի, ըստ Պիւֆոնի, «փիղն յոյժ սիրող է երաժշտութեան եւ գիւրաւ կը սովորի շարժիլ ներդաշնակութեամբ եւ նոյն իսկ քանի մը չեչտեր միացնել թմբուկներու եւ փողերու ջութիւնը»:

Մեր օրով, կան փիղեր որք կը հարկանեն երգիոնակ (լանդերնա) եւ թմբուկ. անցեալ տարի Փարիզի մէջ ի Ֆօլի - Պէռժէր տեսնուած է «Եֆէրազատ իշխանուհոյն» փիղերէն մին որ դարձնոցի փուքի մը զօրութեամբ կը փչէր փողի մը մէջ, ոչ նուազ մեծաշառաչ ձայն մը կը հանէր մետաղեայ չջակէ մը, եւ փոխն ի փոխն չունչ առնելով եւ տալով, կ'ածէր տեսակ մը փոքրիկ ձեռնադաշնակ նման անոնց որք մանկանց ձեռքը կը տրուին:

Հռովմայեցիք շատ կը սիրէին հաւասարակշռութեան մարզանքներն եւ յաճախ լարախաղացներ կը բարձրանային ծռու պարաններու վրայ որք ձգուած էին հողին երեսէն յիշատակարանի մը գագաթը: Այդ պա-

րանաց վրայ մնջկատակներ կ'ընէին որք ստէպ պատերազմական հանգամանք ունէին: Կը պատմուի թէ այդ զինուորական մնջկատակաց միոյն ժամանակ Հռովմա ամիրթատրոնին մէջ տեսնուած է փիղ մը բարձրանալ ձգտեալ պարանին վրայ, մարտիկ մը ունենալով ի նիւս: Գերմանիկոսի ժամանակ եւս կը պատմուի թէ սուսերամարտից հանդէսին ատեն փիղերը պարած են ինչպէս նաեւ հաւասարըռութեան փորձեր ըրած՝ պրկեալ պարանին վրայ:

Քանի մը ամիս առաջ ի Փարիզ Ձիարձակարանին մէջ հասարակութեան ներկայացուցած են այն ամեն հետաքրքրական փորձերն զորս այդ անասունը կրնան ուսնիլ:

Այդ փորձերն, զորս կը կատարէին երկու փիղեր, ճոք եւ ձէննի, հետեւեալներն են.

Երկու փիղերը կը հասնէին բով քովի, գազանազուսպին մտրակը բռնած կնճիթով երկու ծայրերէն: Այս կերպիւ կը դառնային կրկէսին շրջանը: Այն ատեն գազանազուսպը կը ներկայանար, եւ իւր հրամանին վրայ, փիղերը կը պառկէին, մեռեալ ձեւանալով. գազանազուսպը կ'ենէր անոնցմէ միոյն մարմնոյն կամ գլխին վրայ:

Փիղերէն մին կը նստէր հողին վրայ, եւ գազանազուսպը կը կախուէր անոր պատիճէն կամ կը պառկէր ա՛նոր ահադին թաթերուն մէջտեղ:

Ճոք կ'երթար նստիլ տեսակ մը աթոռակի վրայ, առջեւի թաթերը վեր առած, մարմինն ուղղածիւ. իւր ձէննի ընկերն յայնժամ կ'երթար, թաթերը կոնակին կը կրթնցնէր, կը հրէր զայն եւ անոր տեղ կը բարձրանար աթոռակին վրայ:

Այդ փիղերուն կատարած հաւասարակշռութեան փորձերուն մէջ յիշատակութեան արժանի են մի քանիներն, ինչպէս տաշտի մը վրայ ելնել եւ յոտին մնալ ետեւի թաթերուն վրայ. առջեւի թաթերուն վրայ կանգնիլ պատիճին կրթնելով: Անոնցմէ մին նախ և առաջ կը գլորեցնէր գլան մը՝ վրան կրթնցնելով իւր առջեւի թաթերն, յետոյ ամբողջովին կ'ենէր այդ գլանին վրայ եւ յառաջ կը վարէր զայն՝ հաւասարակշիռ մնալով հանդերձ մակերեւոյթին վրայ:

Այդ անասնոց կատարած հաւասարա-

կըշռութեան ամենէն զարմանալի փորձն էր տատանոցն, որ հորիզոնական դիրքով աթոռակի մը վրայ դրուած տախտակ մ'է: Փիղերէն մին կը մագլցէր այդ տախտակին վրայ և մէջտեղը կը հասնէր: տախտակն յայնժամ կը բարձրանար եւ հորիզոնական կը լինէր: փիղը քանի մը վայրկեան անշարժ կը մնար, յետոյ քայլ մը կ'առնուր, տախտակը ծռէր, միւս կողմէն գետնին կը դաշէր, եւ փիղը վար կ'իջնէր:

Երկու փիղերը կ'ենէին նաեւ այդ տախտակին վրայ, եւ զայն կը տատանեցնէին մէկ կողմէն միւսը, սարգապէս տեղափոխելով իրենց ծանրութեան կեդրոնը, ճիշդ ինչպէս մեր տղաքները կ'գրօնուեն հեծանիկի վրայ նստած: Մէկ մ'ալ երկու փիղերն անշարժ կը մնային, իրենց հաւասարակշռութիւնը պահելով հորիզոնական տախտակին վրայ:

Փիղերէն մին կը բալէր արտաբնորոք վրայ: Բնականաբար, փայտեայ զօրաւոր գլաններ էին ասոնք ամրապէս հաստատուած. այդ գլանները սրուակի ձեւ ունէին եւ անոնց իւրաքանչիւրին բերանը ծածկուած էր երկու ձեռքի մեծութեամբ երկաթեայ տախտակով մը, որուն վրայ կը դնէր փիղն իւր լայն ոտքը: Առաջին փորձին մէջ փիղը կ'անցնէր իրարու քով դրուած երկու կարգ սրուակներու վրայէն, այլ ապա կը քաշէր այդ սրուակաց միակ շարքի մը վրայէն, բան մ'որ, փիղին նմա վիթխարի կոյտի մը համար, շատ նեղ ճանրայ մ'էր:

Երաժշտ փիղ. — Այդ փիղն կուգար երգիծական մը առջեւ, պատիճը կը դնէր բռնատեղին վրայ եւ կը դարձնէր զայն երեքցնելով իւր խոշոր գլուխ: Առաջուց քթին վրայ զետեղած էին ահագին ակնոց մը եւ առջին գրասեղանի մը վրայ դրած էին երաժշտութեան տետրակ մը, զոր թղթատած էր, իւր թէ փնտռելով իւր ածելիք եղանակն: Երգիծական չալելու ատեն, օտաւիտորով ըստ չափու կը զարնէր քիչ մը հեռուն դրուած թմբուկ մը:

Պարսկ փիղ. — Մինչդեռ առաջին փիղն երգիծական եւ թմբուկ կը հարկանէր, երկրորդն, որուն առջեւի թաթերէն անցուցած էին բոժոժաւոր ապարանջաններ, կը պարէր, յաջորդաբար բարձրացնելով իւր

թաթերն, դրեթէ հետեւելով իւր ընկերոջ նշանակած չափին:

Փիղերան ճաշ. — Այդ ճաշը շատ կը զուարճացնէր հանդիսատեսները: Փիղերն, իրենց վզէն ղենջակ մը կապած, կ'երթային սեղանի մը առաջ, ետեւի թաթերնուն վրայ ծունր կը դնէին եւ վեր կը բռնէին իրեն առջեւի թաթերն, դիրք մը զոր մեծ դիւրութեամբ կրնան պահել: Այն ատեն երկու ախտներու վրայ փոքր հացեր կը բերէին նոցա, զորս կը բռնէին իրենց պատիճով եւ ի մի պատառ կուլ կուտային: Երբ սեղանը սարսուէր, անոնցմէ մին զանգակ մը առնելով ու ժգնութեամբ կը հնչեցնէր մինչեւ որ նորէն հաց բերէին իրենց: Յաւարտ ճաշուն, գազանագուստը փիղերէն միոյն կը ներկայէր մեծ թուղթ մը ուր նշանակուած էր վճարելի գումարը. փիղը լսելի կ'ընէր բողբոջանաց քրթմնջիւն մը, որ հասարակութեան քրթմնջը կը շարժէր, յետոյ հինգ ֆրանքնոցներ կ'առնուր ղենջակին դրպանէն եւ սեղանին վրայ կը դնէր:

Փիղն արագորոյն վրայ. — Պ. Սամ Լոքարդի եւ իւր փիղերուն Զիարձակարանին մէջ կեցած վերջին օրերը, փիղերէն մին կը կատարէր յոյժ հետաքրքրալարժ փորձ մը, — արագոտնով շրջադայութիւն:

Այդ արագոտն էր տեսակ մը փոքրիկ կառք որուն առջեւի երկու անիւներու տախտակաց վրայ փիղը կը զետեղէր իւր առջեւի թաթերը. յետոյ յաջորդաբար իւր մարմնոյն ծանրութիւնը մէկ կողմէն միւսը տանելով կը դարձնէր անիւներն եւ եւ այս այնքան արագութեամբ, որ իրեն ընկերացող անձը կ'ստիպուէր վազել: Ուղղութիւնը կուտար փղասպանն, որ այս նպատակաւ կը դարձնէր ետեւի կողմն հաստատուած պլատուտակ մը եւ կը փոխէր անիւներուն զուգահեռականը: Այդ փղին տեսքն, իւր յաղթանդամ մարմնով հաստատուած արագոտնին վրայ եւ ճշգրտութեամբ վարելով զայն, յոյժ պօսեցուցիչ էր:

ՀԱՍԿԱՔԱՂ

Հետեւաբար Ա, Կ Գ եւ Բ Կ Գ անկիւնք,
հաւասար են:

Արդ, գրելով

$$(1) \text{ անկ. Ա, Կ Գ} = \text{անկ. Բ Կ Գ}$$

եւ դիտելով թէ

$$(2) \text{ անկ. Կ Ա, Բ} = \text{անկ. Կ Ա, Գ} + \text{անկ. Գ Ա, Բ}$$

եւ թէ

$$(3) \text{ անկ. Կ Բ Ա} = \text{անկ. Օ Բ Ա} - \text{անկ. Կ Բ Դ},$$

$$(2) \text{ եւ } (3) \text{ հաւասարութիւններէն դիւրին}$$

է հետեւեցնել թէ

$$\text{անկ. Կ Ա, Բ} + \text{անկ. Կ Բ Ա} = \text{անկ. Օ Ա, Բ}$$

$$+ \text{անկ. Ա, Բ Օ}$$

Ա, Կ Բ եւ Ա, Օ Բ անհաւասար եռանկեանց

խարսխի անկեանց գումարներն հաւասար

ըլլալով գաղաթի անկիւններն եւս պարտին

հաւասար ըլլալ: Ըսել է թէ

$$\text{անկ. Օ} = \text{անկ. Ա, Կ Բ}$$

Օ անկիւնն անփոփոխ ըլլալով Ա, Կ Բ եւս

պարտի անփոփոխ ըլլալ: Եւ որովհետեւ

Ա, Բ ի մէջտեղէն բարձրացող ուղղահայեա-

ցին վերին կողմը միայն մէկ կէտ կայ որ

այդ յատկութիւնն ունենայ՝ ուրեմն Կ կէ-

տըն մի է եւ անփոփոխ ինչ որ ալ ըլլայ Ա, Գ

եւ Բ Դ:

2⁰— Նմանապէս եթէ առնեմք Ա, Գ՝ եւ

Բ Դ՝ հաւասարք հ' քանակութեան մը, եւ

եթէ Գ՝ Դ ի մէջտեղէն ուղղահայեաց մը

բարձրացնեմ, այս ժ' Կ՝ ուղղահայեացն Կ՝ կէ-

տին, կը հատանէ Կ ժ' ուղղահայեացն:

Գ՝ Ա, Կ՝ եւ Դ՝ Բ Կ՝ եռանկիւնք հաւասար

են, ինչու որ

$$\text{Ա, Գ} = \text{Բ, Դ}, \text{ Գ, Կ} = \text{Դ, Կ} \text{ եւ } \text{Կ, Ա} = \text{Կ, Բ},$$

եւ զայս դիւրին է ապացուցանել:

$$\text{Ըսել է թէ}$$

$$\text{անկ. Գ՝ Ա, Կ} = \text{անկ. Դ՝ Բ Կ}.$$

Արդ.

$$\text{անկ. Օ Ա, Բ} = 2 \text{ ուղղ.} - \text{անկ. Գ՝ Ա, Կ} -$$

$$\text{անկ. Կ՝ Ա, Բ}$$

$$\text{անկ. Օ Բ Ա} = 2 \text{ անկ. Դ՝ Բ Կ} - \text{անկ. Ա, Բ Կ}$$

գումարելով կողմն առ կողմն եւ պարզելով,

$$\text{կ'ըլլայ.}$$

$$(4) \text{ անկ. Օ Ա, Բ} + \text{անկ. Օ Բ Ա} = 2 \text{ ուղղ.} -$$

$$2 \text{ անկ. Կ՝ Ա, Բ} = \text{անկ. Ա, Կ Բ}$$

եւ այս հաւասարութեան առաջին կողմն

կազմող անկիւններն անփոփոխ ըլլալով ա-

ջակողմեան Ա, Կ Բ անկիւնն եւս անփոփոխ

է, հետեւաբար Կ՝ կէտն անփոփոխ է:

3⁰— Կ եւ Կ՝ կէտերու հեռաւորութիւնն

գտնել այժմ շատ կը դիւրանայ: Քանի որ

Ա, Կ Բ անկիւնն հաւասար է Օ անկեան ը-

սել է որ Կ կէտն Օ Բ Ա եռանկիւն գա-

ղաթներէն անցնող շրջանակին վրայ է:

Նմանապէս, քանի որ Ա, Կ՝ Բ անկիւնն

ըստ (4) ի հաւասար է Ա, Ե Բ անկեանց գու-

մարին, ըսել է թէ Կ՝ կէտն նոյն շրջանակին

վրայ է: (Տե՛ս երկրաչ.):

Այլա ուրեմն Կ եւ Կ՝ կէտերն Օ Ա, Բ ե-

ռանկիւնն շրջապատող շրջանակին վրայ են

եւ երկուքին հեռաւորութիւնն հաւասար է

այդ շրջանակին տրամագծին:

Ա, Օ Բ եռանկիւնէն բաղկելով, եւ դիտե-

լով թէ Ա, Օ = ~ եւ Բ Օ = ք

$$(6) \text{ Ա, Բ}^2 = \text{ա}^2 + \text{ք}^2 - 2 \cdot \text{ք} \cdot \text{Հաճ. } \text{Օ}$$

միւս կողմանէ Ա, Կ Բ անկիւնն Օ ի հաւասար

ըլլալով Ա, Կ ժ, $\frac{\text{Օ}}{2}$ կ'ըլլայ, որով Ա, Կ Կ՝ ուղ-

ղանկիւն եռանկիւնէն

$$(7) \text{ Ա, Կ} = \text{Կ Կ՝ Հաճ. Ա, Կ Կ} = \text{ք Հաճ. } \text{Օ}$$

նմանապէս Ա, Կ ժ եռանկիւնէն

$$(8) \text{ Ա, ժ} = \text{Ա, Կ. Մոյ } \frac{\text{Օ}}{2}$$

որով, Ա, Կ ի արժէքն (7) էն (8) ի մէջ փո-

խադրելով

$$\text{Ա, ժ} = \text{ք. Հաճ. } \frac{\text{Օ}}{2} \cdot \text{Մոյ } \frac{\text{Օ}}{2}$$

եւ կամ

$$\text{Ա, Բ} = \text{ք. } 2 \cdot \text{Հաճ. } \frac{\text{Օ}}{2} \cdot \text{Մոյ } \frac{\text{Օ}}{2} = \text{ք. Մոյ } \text{Օ}$$

ուստի

$$(9) \text{ Ա, Բ}^2 = \text{ք.}^2 \cdot \text{Մոյ}^2 \text{Օ}$$

(6) եւ (9) հաւասարութիւններէն

$$\text{ք}^2 \cdot \text{Մոյ}^2 \text{Օ} = \text{ա}^2 + \text{ք}^2 - 2 \cdot \text{ք} \cdot \text{Հաճ. } \text{Օ}$$

ուստի

$$\text{ք}^2 (1 - \text{Հաճ.}^2 \text{Օ}) = \text{ա}^2 + \text{ք}^2 - 2 \cdot \text{ք} \cdot \text{Հաճ. } \text{Օ}$$

եւ աւտի

$$\text{ք}^2 - \text{ք}^2 \cdot \text{Հաճ.}^2 \text{Օ} = \text{ա}^2 + \text{ք}^2 - 2 \cdot \text{ք} \cdot \text{Հաճ. } \text{Օ}$$

աւտի բաղկելով

$$\text{ք}^2 \cdot \text{Հաճ.}^2 \text{Օ} - 2 \cdot \text{ք} \cdot \text{Հաճ. } \text{Օ} - \text{ք}^2 + \text{ք}^2 + \text{ա}^2 = 0$$

այս հաւասարութիւնն ուր Հաճ. Օ անծա-

նօթ է՝ լուծելով՝

$$\text{Հաճ. } \text{Օ} = \frac{\text{ա}^2 + \sqrt{\text{ա}^2 \cdot \text{ք}^2 - \text{ք}^2 (\text{ա}^2 + \text{ք}^2 - \text{ք}^2)}}{\text{ք}^2}$$

Հետաքրքրաշարժ է տեսնել թէ Օ ան-

կիւնն երկու արժէք ունի քանի որ Հաճ. Օ

երկու արժէք ունի երկուքն անհաւասար:

Նմանապէս այս վերջին տարազէն դիւրին է

հետեւցնել խնդրոյն կարելիութեան եւ անկարելիութեան պարագաներն : Ընթերցողին կը թողունք այս հետեւութիւնները հանել :

Դիւրին է սակայն դիտել թէ եթէ Օ կէտին Օ Բ ի հաւասար երկրորդ լար մը գծուի Ն շրջանակին մէջ, այդ լարն Օ Ա ի հետ Օ է տարբեր անկիւն մը կը չինէ, այսու հանդերձ այսպէս յառաջ եկած պատկերին համար Կ եւ Կ' կէտերուն հեռաւորութիւնն, այսինքն Ձ նոյն կը մնայ : Հետեւաբար մի եւ նոյն Ձ ի համար երկու Օ անկիւններ կան եթէ Ա եւ Բ անսկիւնի մնան եւ այդ երկու արժէքներն են որ եռանկիւնաչափութիւնը մեզ տուաւ :

Այս խնդրոյ համար երկու լուծումներ եկան որոց երկուքն ալ սխալ կամ անկատար ըլլալով աստ չենք յիշատակեր :

Այս բան մեծ զարմանք կը պատճառէ մեզ ըստ որում քանիցս եւ քանիներէ դիտողութիւններ եղած են մեզ Մաթի խնդրոց ըստ բաւականի դժուարին չլինելուն համար : Ի՞նչպէս տալ դժուարագոյն խնդիրներ մինչդեռ դիւրիններու լուծումներ դժուարութեանց կը հանդիպին :

ԽՆԴԻՐ ԹԻԻ 16

Լ ՈՒՄՈՒՄ

Սոյն խնդրոյ վերաբերեալ, մեզ հասած լուծումներ սխալ ըլլալով, կը յետաձգենք լուծումն, սպասելով որ ուղիղներ ընդունինք :

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

7 մարտ, 1886

Կարին եւ Տրապիզոն, երկու կարեւորագոյն վիճակներ, Եպիսկոպոս Առաջնորդներ պիտի ունենան ի մօտոյ : Ս. Պատրիարք Հայրն, ըստ որոյման Խառն Ժողովոյ, յատուկ պաշտօնադրով զրկեց Գեր. Օրմանեանի եւ Գեր. Սրուանձտեանցի Եպիսկոպոսական վկայագրերն . հետեւաբար յիշեալ Ս. Հարք

մօտաւոր ժամանակի մը մէջ կը մեկնին ի Ս. Էջմիածին, Վեհ. Մակար Կաթողիկոսէն Եպիսկոպոսական աստիճան ստանալու :

Գեր. Մաղաքիա Մ. Վարդ. Օրմանեան եւ Գեր. Գարեգին Մ. Վարդ. Սրուանձտեանց մեր արժանաւորագոյն եկեղեցականաց դասէն են, եւ գովելի գործունէութիւնն մը ցոյց կուտան այն ընդարձակ վիճակներու մէջ զորս կոչուած են հովուել . գոհացուցիչ է տեսնել որ թէ՛ այդ գաւառներու ազգայինք եւ թէ՛ Կեդր. Վարչութիւնն հաւասարապէս պէտք կ'զգան յիշեալ Գեր. Հարց աստիճանի բարձրացման, որ ո՛չ միայն արժանաւոր վարձատրութիւն մ'է նոցա արդիւնաչառ պաշտօնավարութեան, այլ եւ աւելցնելով անոնց շուքն ու պատկառանքը, մեծապէս կրնայ նպաստել տեղական ազգային գործոց :

Ս. Պատրիարք Հայրը Խառն Ժողովոյ այս աւուր նստին կ'առաջարկէ նմանապէս եպիսկոպոսական աստիճանի բարձրացում որոշել Պայազլուի Առաջնորդ Գեր. Յովհաննէս վարդապետին, նորա բազմաթմանակեայ ծառայութեանց համար : Խառն Ժողովն իւր այս աւուր նստին մէջ կ'զբաղի նաեւ առաջնորդական վիճակաց ումանց եւ մասնաւորապէս Նիկոմիդիոյ վիճակին բարեկարգութեան խնդրով, որոյ պէտքն զգալի եղած է : Գաւառային վիճակաց վրայ խօսելու առթիւ, յիշենք անցողակի թէ Սեբաստիոյ առաջնորդ Գեր. Պետրոս Եպիսկոպոս հեռագրած է Ս. Պատրիարք Հօր թէ կրօնափոխութեան ո՛ր եւ է նոր շարժում չէ պատահած ի Սեբաստիա : Կը յիշուի թէ այս իմաստով լուր մը ստանալով Ս. Պատրիարք Հայրը, տեղեկութիւն խնդրած էր Ն. Գերապատուութենէն : Ի Սեբաստիա Հայ Կաթողիկոսներ կան արդարեւ . բայց Ս. Առաջնորդին պատասխանէն կիմացուի թէ կրօնափոխութեան նոր շարժում չէ պատահած քաղաքին մէջ : Պետրոս Եպիսկոպոսի հեռագիրը կերպով մը հերքում մ'է վերջին շարժներս տարածուած լրոց, բայց հերքում մը որ նոյնքան գոհացուցիչ է Ազգին համար, որքան նպաստաւոր իւր պաշտօնավարութեան նկատմամբ :

Կեդրոնին մէջ, յիշատակութեան արժանի է այցելութիւնն զոր անգլիական նորքնափղէսպանը տուաւ անցեալ շաբթու Ամեն.

Տ. Յարութիւն Պատրիարքին: Շատոնց էր որ Ազգ. Պատրիարքարանը դեսպանական այցելութիւն մը չէր ընդունած: Իբր քաղաքավարական պարտականութիւն մը, Ս. Պատրիարքը Բերա երթալով, այցելութիւն տուած էր Սըր Էտ. Թորնթընի որ փոխադարձ այցելութեան գալով, կէս ժամու չափ տեսակցեցաւ Ս. Պատրիարքին հետ անգլիերէն լեզուաւ, առանց թարգմանի: Սըր Թորնթընի համար կըսուի թէ ազգականութիւն ունի Զօհրապեան հայ դերդաստանին հետ որոյ մէկ անդամը, Պ. Զօհրապ, երբեմն անգլ. հիւպատոս էր ի Կարին եւ այժմ իսկ հիւպատոսական ծառայութեան մէջ կը գտնուի:

Իտալական նորընտիր դեսպան Պարոն տը Կալվանիա եւս հաւանաբար այս օրերս Պատրիարքարանի դայ ի փոխադարձ այցելութիւն մեր Ս. Պատրիարքին որ շնորհաւորութեան գնացած է Ն. Վսեմութեան:

Ս. Պատրիարքն ուրիշ քանի մը բաղաբաւարական այցելութիւններ եւս տուաւ շարթուս մէջ. ի Գատը գիւղ՝ Կիւլլէնկեանց եւ Ունճեանց, եւ յՕրթա գիւղ՝ Մաքսուտեանց եւ Նորատունկեանց այցելելով, ցաւակցութիւն յայտնեց այդ ընտանեաց վերջին սուգերուն համար: Ն. Սրբազնութիւն իւր կողմէ յատկապէս եկեղեցականաց պատգամաւորութիւններ ղրկեց նաեւ Գեր. Էնֆիէճեանի, Հայ Հռովմէականաց պատրիարքական փոխանորդ Գեր. Հռլասեանի, ինչպէս նաեւ մեծանուն յոյն սեղանաւոր Պ. Սթէֆանովիչի յուղարկաւորութեանց, իբր յարգական եւ ցաւակցական ցոյց մը:

*
* * *

Յոյն ազգը երկրորդ Զարիֆի մը կորսնցուց յանձին Պ. Յանի Սթէֆանովիչի, ութսունամեայ սեղանաւոր մը, նշանաւոր իւր հարստութեամբ որքան իւր մարդասիրական գործերով: Գրեթէ ամբողջ Պոլիս շարժեցաւ հանգուցեալ սեղանաւորին յուղարկաւորութեան օրն որ ընդհանուր սգոյ օր մ'եղաւ երախտագէտ հեղինաց համար: Քսան հազարի մօտ կը հաշուի բազմութիւնն յուղարկաւորաց որք այս երկուշարթի օր հետեւեցան մինչեւ ի Շիշլի, Սթէֆանովիչի

դազաղին որ ծածկուած էր հարիւրաւոր պատկերով եւ ծաղկեայ խաչերով խորհրդանշանք եւ լռին արտայայտութիւնք շնորհապարտ սրտերու, կրթական, բարեգործական հաստատութեանց որք լցուած էին հանգուցելոյն բարիքներով: Պ. Սթէֆանովիչ հիմնադիրն ու պետն էր՝ առեւտրական եւ սեղանաւորական առաջնակարգ Տան մը որ 1827 էն ի վեր հետզհետէ զարգանալով եւ ընդարձակելով իւր յարաբերութիւններ, մեծ վարկ ու պատիւ կը վայելէր: Պ. Սթէֆանովիչ թէ եւ կորաքանակ ծերունի մը՝ սակայն իւր կենաց մինչեւ վերջին օրը (1 մարտ) չբաժնուեցաւ իւր գրասենեկէն ուր կը յաճախէր կանոնաւորապէս եւ կ'ըբաղէր գործերով. հանգուցեալը կը թողու երեք զաւակներ՝ Տիմիթրիոս, Եանի եւ Բօլ Սթէֆանովիչ որք կանգուն կը պահեն իրենց հօր վաճառատունը. ծերունի սեղանաւորը մեծագումար նպաստ մը թողած է, կըսուի, մայրաքաղաքիս վարժարանաց, առանց ազգի խտրութեան:

Նուիրատուութեանց առթիւ, յիշենք 50,000 ոսկեոյ գումար մը զոր Վեհ. Սուլթանն իւր անձնական գանձէն ղրկեց Սպարապետի Դրան, արտասովոր պիտոյից համար: Սեպտ. 18 էն ի վեր, օսմանեան բանակն միշտ կազմ եւ պատրաստ վիճակի մէջ մնալու հարկադրուած լինելով, մեծաքանակ ծախուց կը կարօտի արգարեւ: Յունաստանի կողմէն, անմիջական գործողութեան մը ձեռնարկելու երկիւղները փարատած են բարեբաղտաբար եւ Տէրութիւնք կը խորհին Սուտայէն հեռացնել իրենց մարտանաւերն, այն պարագային յորում Յունաստանի վրայ ճնշում բանեցնելու պէտք տեսնէ Ներուպա, որոշած է ետ կոչել Աթէնքի կառավարութեան ըով գտնուող իւր դեսպաններն, հաւաքական վերջնագիր մ'ուղղելէ յետոյ:

Իսկ Պուլկարական խնդիրն որ հարթուած կը նկատուէր թուրքօ - սլուկարական Պայմանագրոյն կնքմամբ, բոլորովին նոր երեւոյթ մ'ստացաւ շարթուս մէջ:

Կնճիւղը այս անգամ Աղեքսանդր իշխանին կողմէ կը ծագի: Ն. Բարձրութիւն որ իւր պատուիրակին՝ Պ. Ջանոֆի ձեռամբ ստորագրած էր յիշեալ Պայմանագիրն, այժմ դժուարութիւն կը յարուցանէ անոր մէկ

գլխաւոր յօդուածին դէմ որ կը վերաբերի իւր պաշտօնաւարութեան պայմանաժամին : Իշխանն ի սկզբան հաւանած էր որ Արեւ. Բումէլիի կուսակալ անուանի հինգ տարւոյ համար , յաւարտ որոյ իւր պաշտօն պիտի վերանորոգուէր Վեհ. Սուլթանին կողմէ , հաւանութեամբ մեծ Տէրութեանց , այժմ իշխանն երկու նոր առաջարկներ կը ներկայէ Բ. Դրան . կամ ա՛յն է որ « յաւարտ իւրաքանչիւր հնգամեայ պայմանաժամի , իւր պաշտօն վերանորոգուի ուղղակի Վեհ. Սուլթանին կողմէ , առանց ուրիշ պետութեան մը միջամտութեան » եւ կամ « Մեծ Տէրութեանց հաւանութեամբ միանգամ ընդ միշտ Արեւ. Բումէլիի կուսակալ անուանի ինք ցկեանս » :

Կարելի չէ ենթադրել թէ Պուլկարիոյ իշխանին այս անակնկալ պահանջումն յառաջ եկած լինի Բեդրասպուրիի Դահլին ստիպումներէն . հետեւաբար երկրին մէջ տիրող յուզումն եւ ընդդիմադիր կուսակցութեան շարժումներն են անոր շարժառիթ : Եւ արդարեւ , իրաց վիճակն յոյժ ծանրակշիռ է յոյսկոյս եւ յայնկոյս Պալքանաց . Պուլկարաց ընդդիմադիր կուսակցութիւնն օր աւուր զօրանալով , կը ծաւալէ իւր դաղափարներ ամեն կողմ եւ ժողովրդեան ամեն խաւերուն մէջ . շիտթութիւնը ի Փիլիպէ , արիւնայեղ կռիւներ Զիրբանի եւ Արեւ. Բումէլիի ուրիշ քանի մը քաղաքաց մէջ . իշխանն հեռագրաւ հրաման ղրկած է ի Փիլիպէ պաշարման վիճակ հրատարակել , ծանուցանելով թէ ինք եւս ի մօտոյ անդ պիտի երթայ , անձամբ տեղեկանալու համար բնակչաց պիտոյից եւ զգացմանց : Պուլկարական պատուիրակ Պ. Զանոֆ ստիպողաբար ետ կոչուեցաւ եւ արդէն պուլկարիոյ մայրաքաղաքն հասած լինելու է այս պահուս :

Իրաց այս յանկարծական փոփոխութեան առջեւ , Պալքանեան խնդիրն , քայլ մը դէպ ի յետս կ'ընկրկի , մինչ այնքա՛ն մերձեցած էր բանաւոր կարգադրութեան մը , եւ Թաթլէ՛ կէս - պաշտօնական թերթը՝ մինչեւ իսկ զինուորական համալսման խօսքեր կ'ընէ « որոցմով կայս . կառավարութիւնը պիտի կարենայ ի հարկին ցոյց տալ իր ահարկու զօրութիւնը եւ չ'սուսվիլ այդ կարգի շիտթութիւններէ » : Յե-

տաճգուեցաւ նաեւ Դեսպանախորհրդոյ գումարումն , վասն զի Տէրութեանց միջեւ դոյացեալ համաձայնութիւնը խախտեցաւ իշխանին այս նորօրինակ պահանջմամբ : Եւրոպա այժմ տարակարծիք է իւր մէջ . ընդհանրապէս մեծամասնութիւնը տրամադիր չ'երեւիր . գոհացում տալու այս նոր պահանջման , եւ եթէ համակերպի իսկ իրաւախոհութեամբ մը , միթէ Բ. Դուռը պիտի հաւանի՞ այդմ :

S. Ա.

Մ Շ Ա Կ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԼՐԱԳԻՐ

Խմբագիր հրատարակող

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բաժանորդագինն է

Տարեկան 10 ռուպի (120 դր. մէճիտ :
Վեցամեայ 6 » (72 » »)
Թղթատարի ծախս խմբագրութեան
վրայ .

Բաժանորդ կարելի է գրուիլ Պուլիս Ղալաթիա-Մոսկանէ-Լոյտի Ս.Ճէնցիա-յի հանդէպ Ռուսքի Մակագին թիւ 109-Պ. Սողման Վրթանէսեանին .

Նոյնպէս կարելի է բաժանորդագինն ուղղակի ղրկել խմբագրութեան , թղթ-թաղրամ ռուպի , Ռուսաց Թղթատարութեան միջոցաւ :

Հասցէ ՄՇԱԿԻ

Tiflis, rédaction du journal arménien « MSCHAK »

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ